ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3385 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 18 ՅՈՒՆՎԱՐ 1883 — Ն. Տ. 30 ՅՈՒՆՎԱՐ

ՊԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճիտա
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 1/2 »
» » Գաւառաց » 6 1/2 »
Օտար թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա
Յանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի

ՄԱՅՐ

ԼՐԱԳԻՐ

30 ՓԱՐԱԶ — ՀԱՆՐԱՊԱՀԱՆՈՒԹԻՒՆ — 30 ՓԱՐԱԶ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆ

Դուրս գնացած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերարերեալ նամակ կամ որեւէ գրութիւն խմբագիր Տնօրէնին պիտի ուղղուի։ Կ. Պոլիս Բիզա փաչա Խօդոյը, Շարդ Զարչըսը թիւ 33 Մասիսի գրասենեակը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զատուած նամակ, յօդուած, եւայլն ետ չեն տրուիր։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խառն. — Հեռագրական.— Ազգային լուրեր. — Թուրքիա, Ռուսիա, Ներսէս Պատրիարք եւ Հայոց ազգը (նամակ ի Մոսկուայէ). — Էջմիածնայ մէջ գործոց վիճակը. — Բժշկական. — «Պօլսեցի պատանիներ եւ Այվազեան խաբեբան». — Ուղեւորութիւն ի Կիլիկիա (Վերջ). — Թերթոն Մասիսի։

Կ. ՊՈԼԻՍ 18 ՅՈՒՆՎԱՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 20 յունվ.

Պ. Ժիւլ Ֆէրրի յանձն չառնլով նոր նախարարութիւնը կազմել, կը կարծուի թէ Պ. Ֆայիէրի պիտի յանձնուի գործը։

Այս պարագայիս մէջ նախորդ նախարարութեան անդամոց շատն իրենց պաշտօնը պիտի պահեն։

Փարիզ 29 յունվ. իրիկուն.

Նախարարութիւնն հետեւեալ կերպիւ կազմուեցաւ.

Պ. Ֆայիէր նախարարապետ ներքին գործոց եւ առժամապէս արտաքին գործոց նախարար.
Պ. Տըվէս՝ դատական.
» Թիրար՝ ելմտական.
» Տիւժոյ՝ կրթական.
» Հէրիսոն՝ հանրօգուտ շինութեանց
» Լըկրան՝ առեւտրական.
» Մահի՝ երկրագործութեան։
» Բոչրի՝ հեռագրաց եւ թղթատարաց

Պատերազմական եւ ծովային գործոց նախարարք յետոյ պիտի անուանին։

Այս ամէն նախարարք նախորդ նախարարութեան անդամ էին նոյն պաշտօններով։

Վիէննա 29 յունվ.

Պ. Տը Կիէրս այսօր մեկնեցաւ ի Բեռլսպուրկ։ Վիէննայի լրագիրք կը շարունակեն հաստատել թէ կարծեաց բարեկամական փոխանակութիւն մը տեղի ունեցած է ընդ մէջ Պ. Տը Կիէրսի եւ Պ. Բանտրքի։

Պէրլին 29 յունվ.

Լրագիրք Լորա Կրանվիլի ծանուցագրին՝ ինչպէս նաեւ Անգլիոյ առաջարկութեանց տրուելիք պատասխանին վրայ կառավարութեանց միջեւ համաձայնութիւն մ'առաջ բերելու գժուարութեանց վրայ կը խորհրդածեն։ Կը հաւատան թէ դիւաւորապէս Ռուսիա եւ Իտալիա ցուրտ կերպիւ ընդուներ են Լորա Կրանվիլի ծրագիրը։

Դանիրէ 29 յունվ.

Սըր Ա. Քոլվինի անուանումը նորէն յետաձգեցաւ՝ իւր իշխանութիւնը ճշդապէս սահմանելու մասին ծագած դժուարութեանց պատճառաւ։

Աթէնք 29 յունվ.

Պ. Քումունտուրոսի վիճակը քիչ մը լաւ է, բայց կը վախցուի որ առժամեայ չլինի։

Ռուսիոյ Կոստանդին մեծ դուքսը մօտ օրէն հոս կ'սպասուի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն Օսմանիէ առաջին պատուանշանը ղրկեց Շուէտի և Նորվէկիոյ առաջին նախարար Պ. Ճէրուլֆի, և Մեճիտիէի առաջին պատուանշանը ղրկեց նոյն տէրութեան առաջին սենեկապետ Պ. Բըրիսթիան Հոլմեի։

Բարձր խորհրդարանին փաշան կիրակի օրը կայսերական պալատ երթալով օրուան մեծ մասն հոն անցուց։

Երէկ մեծ տէրութեանց դեսպանները Բ. Դուռը գնացին և արտաքին գործոց նախարարին հետ տեսակցութիւն մ'ունեցան։

Վիէննայի հրաժարեալ դեսպան բարձր. Լոհէմ փաշան երէկ առաւօտ Կ. Պոլիս հասաւ Վառնայի շոգենաւով, և յամանքն երեկուն պէս կայսերական պալատը գնաց։

Բ. Դուռը բացարձակապէս մերժեց Աբեւելեան Բումէլիի տարեկան հարկը նուազեցնելու որոշումը՝ զոր յիշեալ նահանգին երեսփոխական ժողովը ըրած է։

Բ. Դրան մերժումը նահանգին ելմտական վիճակին յաջողութեան վրայ հիմնեալ է։

Բ. Դրան կողմէ հետեւեալ հեռագիրը ղրկուած է Եւրոպիոյ Օսմ. դեսպանաց, որք զայն հրատարակած են յունվար 19 թուով Լոնտոնի, Փարիզի, Վիէննայի, և այլ լրագրաց մէջ։

«Կ. Պոլիս, 17 յունվար.—Լոնտոնէն առ Նոյէ Ֆրէյէ Բրէսէ լրագիրը ուղղեալ հեռագրի մը տուած լուրը թէ քանի մը Զէրքէսք Ն. Կ. Վեհափառութեան կենաց վրայ փորձ մը փորձած և կայսերական անձնապահ զօրաց կողմէ սպաննուած են, բացարձակապէս սուտ է, և հետեւեալ իրողութեանց խեղաթիւրեալ չափազանցութիւնը պարտի լինել.

«Իբր 15 արրեալ զինուորք որք Պէշիքթաշի Եէնիմահալլէ թաղէն կուգային, իրենց հետ ունենալով անբարոյական կիներ, իրենց մէջ կռուեցան, և մի քանին վիրաւորեցան. բայց կռիւն աւելի արիւնռուշտ հանդամանք չստացած, մատակայ պահականոցէն զօրքեր հասան այդ տեղ, և անկարգութեան վերջ տուին»։

Կ. Պոլիսէն այսպիսի խեղաթիւրեալ կամ չափազանցեալ լուրեր դժբաղդաբար շատ կը հեռագրուին Եւրոպական լրագրաց, որոց ամէն գրածներուն յայտնի է թէ Բ. Դուռը չկրնար հերքում տալ։

Պուլկարիոյ իշխանապետութեան կողմէ վերջերս շրջաբերութեան հանուած արծաթի մէկ ֆրանքնոցն ելմտական նախարարութեան և Արքունի փողերանոցին կողմէ քննուելով, ստուգուած է թէ իրական արժէքը մէկ ֆրանքէն պակաս է. ուստի, միջոցներ ձեռք առնուած են, որպէս զի Թուրքիոյ մէջ շրջաբերութիւն չունենայ։

Կարնոյ նահանգին մէջ Գարաքիլիսէի հեռագրական նորաշէն կայարանն հեռագիր ընդունիլ ըսկըսած է։

Զէնկէլ քէոյ բնակեալ Նուրի պէյ անուն պաշտօնատարի մը Զէրքէզ աղախինը, դժգոհ իւր տիրոջմէն, և զղուած իւր անօրէն վիճակէն, ինքզինք դերութենէ արձակել տալու և տիրոջը ձեռքէն ազատելու համար հետեւեալ հնարը կը խորհի։ Գիշերները դրացիներուն տունները մտնելով անոնց խոհարանի սաներն ու պղնձի անօթները կը գողնայ և կը բերէ իրենց տունը կը պահէ։ Ոստիկանութիւնն իմանալով եղած գողութիւնները, քննութիւն բացաւ և ստուգեց որ գողութեանց հեղինակը Նուրի պէյի Զէրքեզ աղախինն էր։ Եւ որովհետև դատական ատեանի ձեռքն ինկող գերիներն ազատութիւն կը դանեն, Նուրի պէյ պարտաւորեցաւ իւր աղախնոյն ազատութիւնն ստորագրել։ Այժմ յիշեալ աղախինը բանտարկուած է և դատաստանը պիտի տեսնուի։

Բիտլէն գրուած նամակներ կը ծանուցանեն թէ քսան օրէ ի վեր յաճախ երկրաշարժի ցնցումներ կը զգացուին, և թէ՝ 1881 ի մեծ երկրաշարժին ժամանակ պատահածին պէս գետնին տակէն որոտմանձայներ և խուլ մռնչիւններ կը լսուին, այնպէս որ բնակիչք զարհուրելով լեռները կը փախչին։ Սակայն քանի մ'օրէ ի վեր ցնցումները նուազած են։

Հայտար փաշայի հիւանդանոցին ելմտական մատակարարութեան վրայ կասկած ծագելով, կը սէ Հագիգաթի, Պարապատի գուռն յանձնախումբ մ'անուանեց յիշեալ մեծ հաստատութեան հաշիւները քննելու համար։

Ելմտական նախարարութիւնը կը ծանուցանէ թէ ներկայ տարւոյ տրոց փոխարէն Սէհիմներու կըրօններ կամ անվճար մնացած մաքսականներու իմխապէրներ պիտի ընդունուին։ Բայց եթէ կառավարութեան տուրք պարտող անձինք չուզեն օգուտ քաղել այս դիւրութենէն, յառաջիկայ տարի հինգ դրամով պիտի հատուցանեն իրենց տուրքերն, որովհետև յանժամ Սէհիմներ կամ իմխապէրներ չպիտի ընդունուին։

Շաբաթ գիշեր ի Նպաստ Ղալաթիոյ Ցոյն վարժատանց տրուած պարահանդիսին մէջ անհաճոյ դէպք մը պատահեցաւ։

Պ. Ռ. Պ. վալզ մը խաղալու համար իւր օթեակէն վար կ'իջնէ բալթան հոն թողլով, և երբ օթեակը կը վերադառնայ, կը տեսնէ որ իւր արծաթի երախակալով թանկագին ռէվոլվէրը չկար բալթոյին մէջ։

Կ'երեւի որ ճարտար գող մը նշմարած լինելով ռէվոլվէրը, օթեակը մտեր գողցեր էր։

Կը հաւատան թէ ռէվոլվէրն 1,000 ֆրանք կ'արժէր։

Թէրճէմանը Հաղիգաթի իւր այս աւուր թուով կը բացատրէ թէ Շիրքէթի խայրիէի շոգենաւային ընկերութեան և կայսերական կառավարութեան միջեւ արտօնութեան պայմանագրի նկատմամբ ծագած անհամաձայնութիւնը սա իրողութենէն առաջ կուգայ թէ Շիրքէթն իւր արտօնագիրն ստանալէ չորս տարի յետոյ սկսած էր շոգենաւ բանեցնել։ Կառավարութիւնն արտօնագրին թուականը կը ճանչէ, իսկ ընկերութիւնն՝ իւր շոգենաւ բանեցնելու թուականը։

Բարձր. Ահմէտ Վէֆիգ փաշայի անդրանիկ որդւոյն՝ Բէֆիգ պէյին վիճակն զգալի կերպիւ բարւոքեցաւ, և այժմ մահուան վտանգէն բոլորովին ազատած է կըսուի։

Մորնինկ Բօսթ լրագիրը Կ. Պոլսէն հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Բ. Դուռն հաւանականաբար պիտի պնդէ որ Կ. Պոլսոյ դեսպանախորհուրդը վերատին դումարի։

Իզմիրի Էնթարսիալ լրագիրը կը ծանուցանէ թէ յունվար 1 ին օրը Զոյի Կիւլինա անուն 120 տարեկան Ցոյն կին մը մեռեր է։ Իրաց առեալ թէթեւ խլութիւն մը, իւր բոլոր կարողութիւններն անվթար պահած է եղեր մինչեւ վերջին վայրկեանը։

Ցըպլինէն (մայրաքաղաք Իրլանտիոյ) հեռագիր մը կը ծանուցանէ թէ երկու գիւղացիք կախուեր են երկու ոստիկան սպաննած լինելնուն պատճառաւ։

Արդէն տեղեկութիւն տուինք Լիոնի դատարանաց առջեւ տեսնուած դատաստանի մը վրայ, յորմէ Ռուս Ոչնչական Բրաբոթքին իշխանը, որ Զուիցերիայէն արտաքսուելէ յետոյ Ֆրանսայի մէջ հաստատած էր իւր բնակութիւնն, և ուրիշներ ամբաստանուած էին Անիշխանական գաղափարներ տարածելու և Մոնսոյ—Լէ—Մինի վերջին ցաւալի դէպքերուն ուղղակի կամ անուղղակի դրդիչ լինելու յանցանօք։ Բրաբոթքին իշխանն ինքզինք ըստ կարի պաշտպանեց, ցոյց տալով թէ ինք գոհ չէ ընկերութեան արդի վիճակէն ու կաղմուածքէն, և հաստատապէս համոզուած է թէ տասն տարի չանցած Եւրոպոյ մէջ ընկերային մեծ յեղափոխութիւն մը պիտի ծագի։ Այսու հանդերձ, ըսաւ Ռուս իշխանն, ես ուղղակի դրդիչ չեղայ վերջին Անիշխանական անկարգութեանց, թէպէտ Անիշխանական—ընկերվարական գաղափարներ տարածած եմ և պիտի տարածեմ մինչեւ վերջին։ Անիշխանութիւնն ալ սահմանեց իբրեւ վերջին, սահմանն հաւասարութեան, յորում մարդկութիւնը պիտի, իշխաններ, կառավարիչներ չպիտի ունենայ։ —Միւս ամբաստանելոյն մեծագոյն մասն ալ խոստովանեցան իրենց Անիշխանական դաղափարները, բայց անկարգութեանց և եղեռնագործութեանց դրդիչ լինելու ամբաստանութիւնը մերժեցին։

Լիոնի Ֆրանսական դատարանը նախընթաց շաբթու մէջ իւր վճիռը տուաւ, ի մէջ այլոց 5 տարի բանտարկութեան և աւելի երկար ժամանակ ոստիկանական հսկողութեան և քաղաքային իրաւունքներէ զրկման, նաեւ դրամական ծանր տուգանքի մը դատապարտելով զԲրաբոթքին իշխանը։ Դատարանն այս վճիռը հիմնած է վերջին Ֆրանքոյ—Գերմանական պատերազմին վերջը Ֆրանսայի մէջ հասարակորդի անդամոց դէմ հաստատուած խիստ օրինաց վրայ։—Բրաբոթքին յայտարարեց թէ կարեւորութիւն չտար այս դատավճռոյն քանի որ հանրային կարծեաց բարձրագոյն դատարանն արդէն ի Նպաստ իրեն վճիռ տուած էր, և իւր խիղճն ալ հանգիստ է։

Հետաքրքրաշարժ պարագայ մը։— Բրաբոթքին իշխանին այսպիսի ծանրը դատապարտութեամբը Լիոնի մէջ Անիշխանականաց դատաստանին վերջանալուն կարեւոր լուրը Թարգ երկար հեռագրով և երկարագոյն խմբագրականով մը կը հրատարակէ յունուար 20 շաբաթ առաւօտուն իսկ, մինչդեռ նոյն օրը Բարիզի մէջ հրատարակեալ լրագիրքը, իրենց գլուխն ունենալով Թան, որ կէս օրէն երկու ժամ յետոյ կը հրատարակուի, տակաւին չեն տար այս լուրը, զոր անշուշտ հետեւեալ օրն հրատարակած են, թէպէտ Լիոն Ֆրանսայի քաղաք մ'է, և ամենէն առաջ Բարիզի թերթերէն կը սպասուէր տալ այսպիսի ներքին լուրեր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դռանէն Ազգ. Պատրիարքարան ղրկուած գիր մը ծննդոց և վախճանաց ամսական ցուցակներուն կանոնաւորապէս չը ղրկուիլը յիշեցնելով շարունակութիւնը խնդրած է. ուստի Պատրիարքարանը մայրաքաղաքին Թաղ. խորհրդոյ յատուկ շրջաբերականներ ղրկել որոշեց, այս մասին ի կարգապահութիւն հրաւիրելու համար։

Արդէն ծանուցած ենք թէ Պետական խորհուրդը օրինաւոր դըտնելով ընդունած է Պատրիարքարանի հակառաջարկն, որ էր ծննդոց, վախճանաց և ամուսնութեանց ամսական ցուցակ մը Պատրիարքարանէն առ Բ. Դուռն ղրկել յետ հրամանի դործադրութեան։

Կանխահաս, ստայօդ կամ անճիշդ ազգային լուրեր տալով ազգային թերթ մը ձեւանալու ջանադիր թղթաբարբառ. օրագիր մը ծանուցած էր այս օրերս թէ վարչութիւնն իւր վերջին նստին մէջ որոշած է դատարակութեան ելիքացոյցին յատկարեալ դումարէն թերհաշիւ վճարում մ'ընել Ուսումնական խորհրդոյ. թէ Ամենս. Պ. Պատրիարք Հայրն ինք 10 ոսկւոյ դումար մը նպաստ ղրկած է Հ. Իմփեքճեան էֆէնտիին, և թէ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն արքունական մեծ յեղափոխութիւն մը պիտի ծագի։ Այսու հանդերձ, ըսաւ Ռուս իշխանն, ես ուղղակի դրդիչ չեղայ վերջին Անիշխանական անկարգութեանց, թէպէտ Անիշխանական—ընկերվարական գաղափարներ տարածած եմ և պիտի տարածեմ մինչեւ վերջին։ Անիշխանութիւնն ալ սահմանեց իբրեւ վերջին, սահմանն հաւասարութեան, յորում մարդկութիւնը պիտի, իշխաններ, կառավարիչներ չպիտի ունենայ։ —Մի

վտանգաց դէմ զգոյշ կենալու համար վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը կը կարծէ թէ հետեւեալ իմաստիւ համաձայնութիւն մը կընայ գոյանալ Մեծ Տէրութեանց միջեւ, որուն հաւանելու հրաւէր կընայ ուղղուիլ յետոյ ուրիշ աղգաց.—

1. Թէ Զրանցքն ամեն նաւուց անցուդարձին ազատ լինի ամեն պարագայից մէջ։

2. Թէ պատերազմի միջոցին, պատերազմող մը մարտանաւուց Զրանցքի մէջ մնալուն ժամանակ մը որոշուի, և բնաւ զօրք կամ ռազմամթերք չհանուին Զրանցքին մէջ։

3. Թէ թշնամութիւնք տեղի չունենան Զրանցքին մէջ կամ մօտերը, կամ այլուր Եգիպտոսի ծովեզերեայ ջուրերուն մէջ, մինչեւ իսկ եթէ Թուրքիա մին լինի պատերազմող։

4. Թէ այս երկու պայմանաց ո՛չ մին վերաբերութիւն չունենայ այն տնօրինութեանց, որք հարկաւոր կընան լինել Եգիպտոսի պաշտպանութեան համար։

5. Թէ որ և է Տէրութիւն, որոյ մարտանաւք մնաս հասցնեն Զրանցքին, պարտաւոր լինի անոր անմիջական վերանորոգման ծախքը տուժել։

6. Թէ Եգիպտոս իւր կարողութեան չափով ասեն միջոց ձեռք առնու ի գործ դնելու համար այն պայմաններ, որք հաստատուած են պատերազմող նաւուց Զրանցքէն անցուդարձին վրայ պատերազմի միջոցին։

7. Թէ ամրութիւնք չշինուին Զրանցքին վրայ կամ մօտերը։

8. Թէ այս համաձայնութեան մէջ բացորոշապէս ցոյց տրուածէն աւելի սեղմում մը չդրուի Եգիպտոսի կառավարութեան հողային իրաւանց վրայ Զրանցքի մասին։

Գալով այն եվմական կարգադրութեանց որք բոլոր Տէրութեանց հետ համաձայնութեան մը նիւթն եղած էին Եգիպտոսի պարտուց կարգադրութեան օրէնքով, (Լիքվիտէթի հանրածանօթ օրէնքով), վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը կը կարծէ թէ Տայրայի (Պատական) կալուածոց և ուրիշ մի քանի վարչութեանց տնօրինութեան մասին մեծագոյն խնայութիւն և պարզութիւն կընան ձեռք բերուիլ մանրամասնութեանց վերաբերեալ մինչ ինչ փոփոխութեամբք, որք չեն նուազեցներ Եգիպտոսի պարտատերաց ունեցած երաշխաւորութիւնը։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն ի մօտոյ կարող պիտի լինի որոշ առաջարկներ դնել այս մասին Տէրութեանց առջեւ։

Խնդիր մը, յորում բոլոր Տէրութիւնք շահ ունին, և որ եւրոպական ընդհանուր խնդրոյն հետ կապակցութիւն ունի, Եգիպտոսի մէջ օտարազգիներուն և բնիկներուն հաւասար տրոց ենթարկումն է։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն համոզուած է թէ Տէրութիւնք իրեն հետ պիտի միանան ընդունելու համար Եգիպտոսի կառավարութեան որ և իցէ արդարացի առաջարկութիւններն, որոց նպատակը լինի օտարազգիները բնիկներու հետ հաւասար դիրքի մը մէջ դնել այն տրոց մասին որոցմէ ազատ են այժմ։

Գալով Խառն Դատարանաց (Թրէպունալ կոչուած,) որք հաստատուած են Յեգիպտոս միջազգային համաձայնութեամբ՝ բնիկներու և օտարազգիներու միջեւ ծագող քաղաքային դատերու որոշման համար, յայտնի է թէ Ներկայ դատական դրութեան երկարաձգումն, որ անցեալ յունուար ամսոյ մէջ որոշուած էր, բնականաբար վերջ կը դանէ յառաջիկայ փետրուարին։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը խորհուրդ տուաւ Եգիպտոսի նախարարութեան մի նոր երկարաձգում առաջարկել մէկ տարուոյ համար, որպէս զի ժամանակ տրուի օրինադրոց և դատավարութեան վերաբերեալ բարեփոխմանց քննութեան, որ Ներկայ տարւոյ դէպքերով ընդհատուած էր։

Հոս կը վերջանան Եգիպտոսի վերաբերեալ այն խնդիրներ, որք Տէրութեանց հետ միջազգային ուղղակի համաձայնութեան նիւթ եղած էին յառաջագոյն։

Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն իւր գաղափարաց այս ծրագիրը Տէրութեանց Նկատառութեան կը ներկայէ, ըստ որում, վերջին դէպքերէն յետոյ, այս մասին նախաձեռնութիւնն իւր վրայ իյնալ կը թուի, և կը յուսայ թէ անոնց հաւանութեան պիտի արժանանայ։

Երկրորդ կարգի խնդրոց մէջ, ներքին վարչութեան վերաբերեալ միջոցներու առաջինն և ամենէն ըստիպողականն է զօրութեան մը կազմաւորութիւնը վասն պահպանութեան հանրային ապահովութեան ընդդէմ արտաքին կամ ներքին յարձակման։ Թէ՛ խնայողութեան և թէ՛ ապահովութեան համար, Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը փափաքելի կը համարի որ Եգիպտական բանակը փոքր բան մը լինի, և երկրին մէջ բարեկարգութիւն պահպանելու պարտականութիւնը կատարէ՝ որչափ հնար է՝ ոստիկանութեան (Բուլիս) և ոստիկան զինուորութեան (Ժանդարմերի) առանձին մարմին մը։ Խորհիմ և իւր նախարարք մեծ փափաք յայտնեցին որ Անգլիացի սպայից թոյլ տրուի Եգիպտոսի բանակին մէջ պաշտօններ վարելու ընդ վերին հրամանատարութեամբ Խորվին, և առայս Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն հաւանեցաւ ժամանակի մը համար և այնպիսի դրութեամբ մը, որ Եգիպտացի սպայից միջոց կուտայ բարձրագոյն հրամանատարութիւններ վարելու։ Այս ծրագրոյ մանրամասնութիւնք տակաւին քննութեան ներքեւ են, բայց ընդհանուր սկզբունքն ըստ բաւականին ցոյց տրուած են այս յայտարարութեամբք։

Վերջին տարիներու վարչական կարգադրութեանց մէջ, կարեւորագոյնն էր Անգլիացի և Ֆրանսացի ելմտական Տեսչաց (Բոդրլի) հաստատումն, որք հսկողութեան պաշտօններ կը վարէին Եգիպտական պետութեան հասութից և ծախուց նկատմամբ, դրութիւն մը, որուն Ֆրանսական կառավարութիւնն և յետոյ Անգլիական կառավարութիւնը մասնակցեցան։

Այս նիւթոց վերաբերմամբ ներփակ կը յղեմ, թէ՛ ձեր տեղեկութեան համար և թէ՛ այն կառավարութեան հաղորդելու համար որոյ քով դեսպան կարգուած էք, ծանուցագրոյ մը պատճէնը, զոր Եգիպտոսի կառավարութիւնը պաշտօնապէս մատուցած է Անգլիական և Ֆրանսական դործակատարաց ամսոյս 7ին, առաջարկելով որ յիշեալ Բոդրլը չնչուի, և բացատրելով այն նկատումներ, որոցմով կը ներկայէ այսպիսի առաջարկ մը։ Ներփակ կը յղեմ նաեւ մի պատճէնն այն հրահանգաց զոր Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը ղրկած է առ Լորա Տըֆրին, ի պատասխան Եգիպտական կառավարութեան այդ ծանուցագրին, յորմէ կը տեսնուի թէ Անգլիա կը հաւանի Բոդրլի չնչման, բայց այն պայմանաւ որ առ այժմ Եւրոպացի պաշտօնատար մը Խորվին ելմտական խորհրդական նշանակուի։ Այս տնօրինութեան մասին, Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը Թալանձանօք կը խնդրէ Ֆրանսայի հաւանութիւնը։

Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը զօրեղապէս յորդորած է ընդ Խորվին, որ բնիկներու համար դատական բարւոք վարչութիւն մը հաստատէ երկրին ամեն կողմը, և ապահով է թէ ի մօտոյ ազգեցիկ միջոցներ ձեռք պիտի առնուին այս նպատակաւ։

Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը մեծ կարեւորութիւն կուտայ Գերեաց առեւտրոյն ջնջման և ըստ կարի գերութեան բարձման Յեգիպտոս։ Ուստի, պատեհ առիթ ձեռքէ չպիտի հանէ Խորվին խորհուրդ տալու որ այս նպատակայ իրագործման համար օրինաւոր միջոցներն ի գործ դնէ։

Կը մնայ Եգիպտոսի մէջ քաղաքական հիմնարկութեանց զարգացման խնդիրը։ Շատ կարեւոր և բարդակազմութեան խնդիր մ՚է այս, որոյ լուծումն երկրին և ժողովրդեան հանգամանաց խնամով ուսումնասիրութեան կը կարօտի։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը կը կարծէ թէ որ և է ձեւով ներկայացուցչական (կամ երեսփոխանական) դրութեան խոհեմաբար ներմուծումն Յեգիպտոս՝ մեծապէս կը նպաստէ երկրին բարւոք կառավարութեան և Խորվական իշխանութեան ապահովութեան և կանոնաւորութեան։ Բայց իւր Ներկայացուցիչներէն որ յեգիպտոս՝ նոր տեղեկագրաց կ՚ըսպասէ (Ինդլիս) եզրակացութեան մը դալու համար այն ձեւոյ մասին, որ յարմարագոյն կրնայ լինել Ներկայ պարագային, ապագայ զարգացման ալ առիթներ տալով։

Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն ուզեց կատարեալ տեղեկութիւն տալ Տէրութեանց այս նիւթոց վրայ, օրք անմիջական կապակցութիւն ունին Եգիպտոսի խաղաղութեան, ապահովութեան և ընկերային բարեկարգութեան հետ, և որոց վրայ, հետեւապէս, պարտականութիւն հմարած է խորհուրդներ տալ Խորվին՝ իւր կառավարական իշխանութիւնն ի գործ դնելու լաւագոյն եղանակին նկատմամբ։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն ապահով է թէ այն տեսակէտ որով գործած է՝ համաձայն պիտի դայ միւս կառավարութեանց ալ տեսութեան, որք կարեւորութիւն կ՚ընծայեն Եգիպտոսի բարեկեցութեան։

Ներկայ ծանուցագրոյ մէկ պատճէնն հաղորդեցէք այն կառավարութեան որոյ քով պաշտօն կը վարէք։

ԿՐԱՆՎԻԼ

ԹՈՒՐՔԻՈՅ, ՌՈՒՍԻՈՅ, ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱԶԳԸ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՍԻՈՅ

(Մեր յարգելի Թղթակցէն)

(Շար. Մոսկուայի Նամակին)

Արդ՝ Հայ վաճառականն կարծիք յայտնեց թէ Վեհ. Սուլթանն իւր այդ պանծալի և խորհրդաւոր ուրոյնմամբ կաչառեց բովանդակ Հայ ազգի սրբազան զգացմունքները և յուսիսեռականդաշնակցութեան հիմ դրաւ։ Մինչ սխալուց Հայն այսպէս կարծելով. իրաւունք ունի՞ նա իւր դաշնակցութիւնն օգտաւէտ համարել Թուրքիոյ ամբողջութեան և բարօրութեան համար։ Մինչ Թուրքիան այլ եւս չ՚պիտի արհամարհէ տակաւ կարծեցեալ Հայ ազգին ազատութիւն և դաշնակցութիւնը։ — Ահա ինչ խորհուրդներ յուզեց Պատրիարքի վերահաստատման լուրը։

Ազգային թէ քաղաքական տեսակէտէ նայիմք մեր դիտաւորութեանց և գործադրելի միջոցներուն վրայ՝ Հայք պարտաւոր են ընդունիլ որ իրենց փրկութիւնը Թուրքիայէն է կախեալ։ Ազգային թէ քաղաքական տեսակէտէ նայիմք Թուրքիոյ փառքին և յարատեւութեան վրայ՝ մեք և Թուրքիան պարտաւոր ենք ընդունիլ որ Հայ ազգի դաշնակցութիւնը անհրաժեշտ է Թուրքիոյ փրկութեան համար։

Ի հարկէ ծիծաղելի կը թուի ոմանց տակաւ Հայ ազգի օգնութեան կարօտ համարել Օսմանեան հզօր պետութիւնը. բայց լուրջ և իմաստուն անձի համար շատ պարզ է որ ասածս անսխալ ճշմարտութիւն է։ Պատմութիւնն ուսուցանում է մեզ թէ շատ հզօր պետութիւնք տապալած են տակաւ կարծեցեալ դաշնակից մը արհամարհելուն համար։ գրեթէ յոյժ ճակատամարտեր ամենայն պարտութեան են փոխուած տակաւ ոյժ մը, անկեան՝ ըստ երեւոյթին՝ պարագայ մը անտես անելուն համար։ Վերջապէս Ռուսիան և Նորա աշխարհակալութիւնները զօրաւորագոյն և անհերքելի ապացոյց են առածիս։ Եւ, ամեն կանխակալ կարծիք մի կողմ դնելով, իրաւունք չունի՞մք պնդել թէ Ռուսիոյ յաջողութիւնները Նորա քաղաքագիտութեան մէջ կը պարունակին. իրաւունք չունի՞մք պնդել թէ վերջին իսկ պատերազմի ժամանակ Նա յաղթանակեց զլխաւորապէս այն պատճառաւ որ Թուրքիոյ շատ հըպատակաց և մանաւանդ ցեղակից Սլաւոնաց համակրութիւնները դըրաւած և իրեն զօրաւոր դաշնակից ունէր։ Կաւկասի և Հայաստանի Պարսկական մասի տիրապետութիւնը նոյն միջոցաւ չարա՞ւ արդեօք Ռուսիա։ Դարձեալ վերջին պատերազմի ժամանակ, կարսի առումն և այլն որ այնքան Հայեր լացեցրու, նոյն Հայերը չէ՞ն որ զօրաւորապէս օգնեցին։

Այո՛, այս շատ կնճռոտ խնդիր է և ըստ երեւութին օգտակար լինելու բնութիւն չունի Թուրքիոյ Հայ ազգին հետ կապելիք դաշնակցութիւնը։ Սակայն անժխտելի ճշմարտութիւն ընդունելով Հայոց յանցելումն Ռուսիային արած զօրաւոր օգնութիւնն, ոչ այնքան մարմնապէս որպէսի բարոյապէս, նոյնպէս անժխտելի ճշմարտութիւն պիտի ընդունիմք, մանաւանդ առաջին ճշմարտութիւնը համոզիչ զօրաւոր պարագայ համարելով, որ Հայոց դաշնակցութիւնը Թուրքիոյ համար շատ աւելի անհրաժեշտ, շատ աւելի արդիւնաւոր և շատ աւելի գիւրին ու կարելի է։ Եւ այս նպատակին հասնելու համար ուրիշ ոչինչ է հարկաւոր, բայց եթէ Հայ ազգին պատմական և մարդկային իրաւունքները ճանաչել և յարգել։—սա խիստ դիւրին է։

Հակաւաւոր իմաստասէրք ասած են թէ՝ Եւրոպական զօրաց անպարտութեան գաղտնիքը նոցա կարգապահութեան և հնութեան մէջ է կայացած։ Ամեն զօրավար և հրամանատար պիտի ճանչնայ իւր զօրաց անձնական յատկութիւններ և տրամադրութիւնը, և պէտք չէ կարծել թէ բաւական է որ զօրքը կատարեալ վստահութիւն ունենայ իւր զօրավարին և հրամանատարին վրայ. այլ նա պիտի կատարելապէս համոզուած լինի թէ նա ունի զօրաւոր թիկնապահ ամբողջ ազգը։

Արդ՝ ըստ պատերազմականին Օսմանեան զօրքն ըստ բաւականին չունէին յաղթութեան տանող այս յատկութիւններից։ իսկ Ռուսք օժտուած էին այդ պարագայիւք։ Եւ յիրաւի՝ Բալքանեան թերակղզոյ ռազմավայրի վրայ ունեցած Թուրքիոյ անյաջողութեանց կարեւոր պատճառներից մին այն էր որ իւր բոլոր զօրքն յուսահատ վիճակի մէջ էին։ Ջրջապատող ցեղերը թշնամի էին։ Աւարեանին դոյով զարմանալի և սարսափելի չէր լսել Մուխտար փաշայի յաղթական զօրաց անյաջողութիւնը, Ղարսի յանկարծական առումն և մինչև Էրզրումի դռներ հասնիլն։ Եւ ինչ էր պատճառ որ Ռուսք Մուխտար փաշայի յաղթական զօրաց արշաւանքը արդիլել կարողացան, կրաւորապէս միայն ընդդիմադրելով։ Միակ և զօրաւորագոյն պատճառն համարուած է որ Ռուս զօրքը բընիկներուն բարոյական դաշնակցութիւնն ունէր և վստահ էր կատարելապէս թէ թիկունք մնացած ժողովուրդը պաշտպան են իրեն։ Եւ սակայն կուկասի բնակչաց մէջ կառավարութեան դէմ ապստամբութիւններ կային։ Խրիմի և վերջին պատերազմներու ժամանակ Կուկասի մահմետականք ապստամբեցան Ռուսիոյ դէմ. բայց ոչինչ չահեցան։ Նոյն իսկ Թուրքահպատակ ցեղերը Օսմ. զօրաց հզօր թիկնապահներ, դէթ բարոյական ոյժ լինել չկրցան։ Իսկ Հայք 20 հազարով փախան և Երեւանայ նահանգն ողողեցին։ Արդ, այս անուտ իրողութիւնները զօրաւոր ապացոյց չէ՞ն թէ Թուրքիան ոչ իւր և ոչ օտար սահմաններուն չպիտի յուսայ բացառապէս մահմետականաց վրայ։

Ինչ էր պատճառ որ Կուկասի Մահմետականք յաջողութիւն չունեցան.—այն որ Քրիստոնեայք ամեն տեղ դործով և խօսքով, նիւթականով և բարոյականով արդելք եղան։ Եթէ վայրկեան մը ենթադրեմք Մահմետականաց և Հայոց մէջ հաշտարարութիւն և համամտութիւն, այն ժամանակ տարբեր հետեւանքներ կ՚ստացուէին, այն ժամանակ Ռուսաց զօրքն, մինչեւ միջին Ռուսիային օգնութիւն հասնիլը, կը ջախջախուէր և հարկ կը լինէր ոչ միայն Մուխտար փաշայի զօրաց հետ կըռուիլ այլ ամբողջ Կուկասն կրկինն ուսաճեր.—Դիւրի՞ն էր սա։ Բայց միանգամայն կարելի՞ էր սա։ Ոչ ի հարկէ և իրաց արդի վիճակին մէջ Նաեւ տգիտութիւն էր սպասել։ Այս իրողութիւնը քաջ դիտէ Ռուսը և ամեն հնար կը դործադրէ այդ ձեռներու վիճակը անփոփոխ յարատեւել։

Ուրեմն, կը կարծեն, Հայք իբրեւ քրիստոնեայ յարած են քրիստոնէին։ Այսպէս կարծելը սակայն տարօրինակ տրամաբանութիւն է. զի ճշմարտութեան դէմ չարաչար մեղանչել է։ Քրիստոնեայք ինչո՞ւ էին ընդդէմ Թուրքաց յաղթութեան. որովհետեւ, կը կարծէին, և Աշխէրայցոց և Բայազիտցոց կոտորումն ու փախուստը աւելորդ ապացոյց էր, որ Թուրքիոյ յաղթական զօրքերը, մանաւանդ կամաւորք, քրիստոնէից ինչ և կեանք չպիտի խնայէին։ Մահմետական հայրենակցաց ապստամբութեան ինչո՞ւ արդելք եղան. որովհետեւ իրենք և կայքերը դոհ պիտի երթային մոլեռանդ ժողովրդոց, որոց համար քաղաքական նպատակներ և հայրենակցական զգացմունք չկան, թէև խաղաղութեան ժամանակ եղբայրաբար կը վարուին Հայք Մահմէտականաց հետ։ Գիտէ՞ք կուկասի Մահմէտականաց բաղձանքները մ՚ինչ էին 1877 թիւ ամռան։ Ապստամբած Կուկասցի Մահմէտականք անդթաբար կոտորում էին Հայերը զի քրիստոնեայ էին. իսկ չապըստամբած Մահմէտականք անհամբեր սպասելով Մուխտար փաշայի կատարեալ յաղթանակին, արդէն հաշուում էին թէ որչափ Հայ քրիստոնեայ պիտի կոտորէին և ում ու որչափ կայք և ինչք պիտի յափըշտակէին։ Արիւնհեղութեան և յափշտակութեան պատրաստութեան ինչոյ՞ր էր որ կը կատարէին Մահմէտականք, և այսպիսի դէպքերում կուկասի խեղճ Հայ անդէն ժողովուրդը կրնա՞ր Մահմէտականաց հետ միաբանելու և միատեղ գործելու վրայ մտածել։ Սա յիմարութիւն կը լինէր։ Եթէ այս էր կուկասի և Ռուսահայոց վիճակը, կը կարծուէր թէ վատթարագոյն էր յայնժամ Թուրքահայոց վիճակը։ Եւ ի՞նչ օգուտ Թուրքիայի քաղաքական նպատակներուն և նաեւ փրկութեան՝ մանաւանդ և արիւնախնամ օգնականներ ունենալէն, որք անդէն և օգտակար ժողովուրդ մը կոտորելով ոչ թէ նորա յաջողութեանց նպաստում չեն այլ մինչեւ իսկ հիմնայատակ կործանում են նորա ջանքերը։—Եւ այս իրողութիւնները չէ՞ն հաստատում միթէ թէ Թուրքիոյ ներքին կարեւորագոյն դաշնակիցը նախ և առաջ Հայն է։

Արդ, ո՛չ Հայոց տեսակէտէն, այլ ընդհանուր քաղաքական տեսակէտէ Թուրքիա պիտի ջանայ Հայոց հանգիստութիւնը՝ եթէ չունենան եւս՝ ստեղծել և գրաւել. և այս նպատակը կատարելապէս իրագործելի է, միայն թէ Թուրքահպատակ Հայոցմէ սկսելու է։ Պէտք է որ Հայք համոզուին Թուրքիոյ անկեղծութեան, պէտք է որ Մահմետականք կատարեալ եղբայրաբար վարուին Հայոց հետ և ոչ երբէք թշնամաբար, մանաւանդ կարգապահ պիտի լինին զօրքն, անպաշարդարապէս լինին տեղական կառավարիչք ևն.—ասսի է փրկութիւն ասսի է փառք։ Ամեն կառավարութեան ոյժն նորա ժողովուրդն է, եթէ դա նիւթական և մտաւոր–բարոյական կատարեալ զարդացման ճանապարհում է։

Ուրեմն, թէ՛ ըստ պատերազմականին և թէ՛ ըստ քաղաքականին, Թուրքիան պիտի հետեւի Ռուսաց օրինակին, իւր և օտարահպատակ ժողովրդոյ եղած հանգիստութիւնը զօրացնելով և չնչաղը ստեղծելով։ Մահմետականաց և Քրիստոնէից մէջ համերաշխութիւն և համամտութիւն անհրաժեշտ են։ Ամեն հակառակորդի զօրաւոր և թոյլ կողմերը պէտք է դիտել հանապազ և զօրաւոր միջոցները գործադրել նաեւ թոյլ կողմերից օգուտ քաղել։

Թուրքիոյ և Հայ ազգին մէջ օրինաւոր դաշնակցութիւն է անհրաժեշտ։ Ներսէս Պատրիարքի վերահաստատումը աւետեց Հայոց թէ Վեհ. Սուլթան իմաստութեամբ ըմբռնած է այդ կարծիքը և վճռական ձեւով իրագործելու է այդ փրկարար խորհուրդը։ Այս էր Հայ ազգի խնդութեան պատճառը, և՝ այս էր Ռուսաց կայծակնահար լինելու պատճառը։ Վեհափառ Սուլթանի այդ խորագէտ և երանաւէտ ընթացքը սարսափելի հարուած աբաւաւ Ռուսաց ազգեցութեան, յիդաշրջեց, տակն ու վրայ տրաւ սոցա խորհուրդները։ Սարա մեծ տագնապի մէջ են։ Բայց թշնամաճակատագիրը կարծես Հայերը հաւատացեալ դադրած չէ տակաւին, զի կարեւոր արդելքներ կը հանէ փերկարար խորհրդոց իրագործման։—

* * *

Զարմանալի լուրեր կը հաղորդեն մեզ Ռուս թերթերն և այս անպատճառ Ներսէս Պատրիարքի վերահաստատման հոյակապ կարեւորութիւնն ու զօրութիւնը կատարելու համար անշուշտ։ Ամենամեծ խոհեմութիւն և իմաստութիւն է հարկաւոր տեղի ունեցող դէպքերը դատելու համար։ Եւ ի՞նչ հարկաւոր էր Հայոց դաւադրութիւն և ապստամբութիւն այսպիսի ժամանակ։ Ո՞հ, ո՞րչափ ուրախ են Ռուսք այդ լուրերուն, զի կը յուսան թէ դոցա ազդեցութիւնը վեհ. Սուլթանին Հայ ազգին ցուցած վստահութիւնը կը ջնջէ խապա։

«Էրզրումի և Թիւրքայ Հայաստանի մէջ դաւադրութիւն և ապըստամբութիւն կայ», հաղորդեցին Ռուս լրագիրք։ «Հայեր դաւադրութիւն և ապստամբութիւն ունին. 200 յետոյ 400 Հայ ձերբակալուած են, դրում են Ռուս թերթերը. այդ դաւադրութիւնը գաղտնի և ընդարձակ ընկերութեան գործ է.» «Այդ ապստամբութիւնն և դաւադրութիւնն բացատրեան թէ՝ «բակղզոյ Սլաւոնաց դաւադրու«թեանց հետ կապ ունեն», պընդում են Ռուս թերթերը։

Մեք այս լուրերից ոչինչ չհասկըցանք։ Սա՞ղ է որ Հայք ապըստամբած են և դաւադրիչ ընկերութիւն կայ Էրզրումում. սա՞ղ է որ 400 անձ ձերբակալուած են, և ձերբակալութիւնը կը շարունակուի։ Սա՞ղ է որ Հայք են իսկապէս ապստամբք և ձերբակալեալք։ Բայց եթէ սա՞ղ են այդ ցաւալի իրողութիւններն, որք ազգին վնասելէն զատ ուրիշ արդիւնք չեն կարող արտադրել, ինչո՞ւ Ռուս թերթերն այսքան ուրախացան և ինչո՞ւ երբեմն Հայ կ՚անուանեն ապըստամբներն և երբեմն ոչ Հայ։ Մանաւանդ ապշելի է այն պարագան որ «Հայոց դաւադրութիւնը կապ ունի եղեր Սլաւոնացւոց դաւադրութեանց հետ»։ Եթէ Հայք իսկապէս ապստամբած են, ի՞նչպէս կրցան Սլաւոնաց հետ ընկերանալ և ի՞նչ ընդհանուր շահ Հայոց և Բալդանի Սլաւոնաց մէջ։ Մի՞թէ դարձեալ Հայոց արեամբ և սրբազան հայրենեաց պղծութեամ՞բ պիտի ձեռք բերուի Սլաւոնաց նոր փառամոլական ձգտումները։ Սլաւոնք արդէն ազատ են. Հայք ի՞նչ աբին այդ ցեղերուն որ ջնջուելու դատապարտուին։

(Մնացեալը յետոյ.)

ԷՋՄԻԱԾՆԱՑ ՄԷՋ

ԳՈՐԾՈՅ ՎԻՃԱԿԸ

—=—

Երեւանու Պոսկ չաբաթաթերթին դեկտ. 25 թուոյն մէջ կը կարդանք.

Նորոդ Հանդուցեալ հայրապետի կտակի մասին վաղարշապատից մեզ դրում են հետեւեալը։ Աբաւլիցի մեզ հաւատալ այսպիսի մի չինծու կտակի, որի Տէրը՝ Բիւրականից վերջին անդամ էջմիածին վերադառնալիս՝ կառքի մէջ ընկղմնած ժամին, բարձի տեղ իրենի արկղն էր դրել գլխի տակ։ Բաւլիցի մեզ հաւատալ թէ վեհափառը ողջ չուներ, մինչդեռ իր ձեռնասուն ծառայքը պատմում են արխօքերը թէ, եթէ մի օր պատահմամբ մնանում էինք այդ արկղին, վեհափառը սրտի ցաւից և երկիւղից այն օրը միզարդել էր լինում։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառը իրեղէն և հագուստ չունէր. մինչդեռ սրանից մի քանի օր առաջ, դիւզացու մէկը ցաւակցաբար յայտնում է իր մի ծանօթ ազգային, թէ վեհափառի կայքերին 5 արկղից աւելի պարտակուած է իրենց դիւղում և թէ գիտէ տեղը։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառն արծաթեղէն չունէր, մինչդեռ մի սմն Շաթիր պատմում էր մի օր յայտնապէս թէ վեհափառի Ռուսաստան ճանապարհորդած ժամանակ, 5 ափսէ լի արծաթեղէնների դանակ, պատառաքաղ և դրդալ կցրել արծաթեղէնների համար յատուկ շինուած վեհափառի սնտուկի մէջ, և թէ այդ ամենը անարատութեամբ կային մինչև նոյեմբերի վերջը։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառը թանկագին մատանիներ չունէր, մինչդեռ Ռուսաստան դնացած ժամանակ առել է հեռը սուրբ ամոռի դանձարանից 30 հատ մեծ ակն և թանկագին մատանիք սրան և նրան ընծայելու համար, որոնցից և 6 հատը ն է միայն ընծայել, և այն ևս իր բարեկամներին։ Իսկ մնացածը մնացել էր իր մօտ։ Բաւ լիցի մեզ մատանեաց համար դարձեալ հաւատալ թէ չունէր, մինչդեռ սրանից մի քանի տարի առաջ Բիւրականի Մինաս աղայն ի պարգեւ վեհափառին բերել էր իր հետ մատանի, ամեն մինը 1000 մանէթ կաւոր էր Հայոց դաւադրութիւն և ապստամբութիւն այսպիսի ժամանակ։ Ո՞հ, ո՞րչափ ուրախ են Ռուսք այդ լուրերուն, զի կը յուսան թէ դոցա ազդեցութիւնը վեհ. Սուլթանին Հայ ազգին ցուցած վստահութիւնը կը ջնջէ խապա։

«Էրզրումի և Թիւրքայ Հայաստանի մէջ դաւադրութիւն և ապըստամբութիւն կայ», հաղորդեցին Ռուս լրագիրք։ «Հայեր դաւադրութիւն և ապստամբութիւն ունին. 200 յետոյ 400 Հայ ձերբակալուած են, դրում են Ռուս թերթերը. այդ դաւադրութիւնը գաղտնի և ընդարձակ ընկերութեան գործ է.» «Այդ ապստամբութիւնն և դաւադրութիւնն բացատրեան թէ՝ «բակղզոյ Սլաւոնաց դաւադրու«թեանց հետ կապ ունեն», պընդում են Ռուս թերթերը։

Մեք այս լուրերից ոչինչ չհասկըցանք։ Սա՞ղ է որ Հայք ապըստամբած են և դաւադրիչ ընկերութիւն կայ Էրզրումում. սա՞ղ է որ 400 անձ ձերբակալուած են, և ձերբակալութիւնը կը շարունակուի։ Սա՞ղ է որ Հայք են իսկապէս ապստամբք և ձերբակալեալք։ Բայց եթէ սա՞ղ են այդ ցաւալի իրողութիւններն, որք ազգին վնասելէն զատ ուրիշ արդիւնք չեն կարող արտադրել, ինչո՞ւ Ռուս թերթերն այսքան ուրախացան և ինչո՞ւ երբեմն Հայ կ՚անուանեն ապըստամբներն և երբեմն ոչ Հայ։ Մանաւանդ ապշելի է այն պարագան որ «Հայոց դաւադրութիւնը կապ ունի եղեր Սլաւոնացւոց դաւադրութեանց հետ»։ Եթէ Հայք իսկապէս ապստամբած են, ի՞նչպէս կրցան Սլաւոնաց հետ ընկերանալ և ի՞նչ ընդհանուր շահ Հայոց և Բալդանի Սլաւոնաց մէջ։ Մի՞թէ դարձեալ Հայոց արեամբ և սրբազան հայրենեաց պղծութեամ՞բ պիտի ձեռք բերուի Սլաւոնաց նոր փառամոլական ձգտումները։ Սլաւոնք արդէն ազատ են. Հայք ի՞նչ աբին այդ ցեղերուն որ ջնջուելու դատապարտուին։

(Մնացեալը յետոյ.)

ԷՋՄԻԱԾՆԱՑ ՄԷՋ

ԳՈՐԾՈՅ ՎԻՃԱԿԸ

—=—

Երեւանու Պոսկ չաբաթաթերթին դեկտ. 25 թուոյն մէջ կը կարդանք.

Նորոդ Հանդուցեալ հայրապետի կտակի մասին վաղարշապատից մեզ դրում են հետեւեալը։ Աբաւլիցի մեզ հաւատալ այսպիսի մի չինծու կտակի, որի Տէրը՝ Բիւրականից վերջին անդամ էջմիածին վերադառնալիս՝ կառքի մէջ ընկղմնած ժամին, բարձի տեղ իրենի արկղն էր դրել գլխի տակ։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառը ողջ չուներ, մինչդեռ իր ձեռնասուն ծառայքը պատմում են արխօքերը թէ, եթէ մի օր պատահմամբ մնանում էինք այդ արկղին, վեհափառը սրտի ցաւից և երկիւղից այն օրը միզարդել էր լինում։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառը իրեղէն և հագուստ չունէր. մինչդեռ սրանից մի քանի օր առաջ, դիւզացու մէկը ցաւակցաբար յայտնում է իր մի ծանօթ ազգային, թէ վեհափառի կայքերին 5 արկղից աւելի պարտակուած է իրենց դիւղում և թէ գիտէ տեղը։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառն արծաթեղէն չունէր, մինչդեռ մի սմն Շաթիր պատմում էր մի օր յայտնապէս թէ վեհափառի Ռուսաստան ճանապարհորդած ժամանակ, 5 ափսէ լի արծաթեղէնների դանակ, պատառաքաղ և դրդալ կցրել արծաթեղէնների համար յատուկ շինուած վեհափառի սնտուկի մէջ, և թէ այդ ամենը անարատութեամբ կային մինչև նոյեմբերի վերջը։ Բաւ լիցի մեզ հաւատալ թէ վեհափառը թանկագին մատանիներ չունէր, մինչդեռ Ռուսաստան դնացած ժամանակ առել է հեռը սուրբ ամոռի դանձարանից 30 հատ մեծ ակն և թանկագին մատանիք սրան և նրան ընծայելու համար, որոնցից և 6 հատը ն է միայն ընծայել, և այն ևս իր բարեկամներին։ Իսկ մնացածը մնացել էր իր մօտ։ Բաւ լիցի մեզ մատանեաց համար դարձեալ հաւատալ թէ չունէր, մինչդեռ սրանից մի քանի տարի առաջ Բիւրականի Մինաս աղայն ի պարգեւ վեհափառին բերել էր իր հետ մատանի, ամեն մինը 1000 մանէթ

արժողութեամբ, և 20,000 մանեթի դնահատութեամբ մի պատուական քար ի Ս. Էջմիածնին, որոց ցոյց էր տուել և միաբաններից շատերին։ Քաւ լիցի մեզ կարծել թէ վեհափառը ազնիւ գործեր չունէր։ Մինչդեռ անցեալ օր յետ էին պատանեալում Սինոդականք վեհափառի մի պարտաւոր սպասաւորից Պարսկաստանում գործուած 4 պատուական գործեր, որոց համար ասում էր նոյն սպասաւորը թէ վեհ. ինձ պարգևած է։ Սակայն այս ամենը չը կայ այսօր։ . . . Զը պէ՞տք է որոնել։

* * *

Էջմիածնից մեզ գրում են. «Երէկ, (գեկտ. 20) Սինոդը օրագրով մի յանձնաժողով կազմեց, որի անդամներն են՝ Երևմիա և Արիստակէս եպիսկոպոսները, Կիւրեղ և Գրիգորիս վարդապետները, Բժ. Տէր Գասպարեան և Սեդրակ Մանդինեան. յանձնեց գրանց, որ հետազօտեն և գտնեն թէ կամ ոչ կոխոց և թէ վանքից դուրս ածած կայքերն ու գոյքերը։ Աշխարհականների ընարութիւնն անյաջող է. պէտք է հրաւիրել՝ քննել խմբագրող մանագէտ և միւնոյն ժամանակ անայառ ու ազնիւ անհատների...։

Միաբանութիւնը խնդիր է պատրաստում Սրբազան Տեղակալի անուամբ՝ Բարդուղիմէոս վարդապետին խորհրդարից Էջմիածին բերել տալու համար, ինչպէս ճշմարիտ և արդարութեան համար հալածուած ու աքսորուած անձի։ Բայց կասկածում են որ Գ. և Ն. եպիսկոպոսները արգելք լինին։ Սակայն մեք բոլորովին լիայոյս ենք որ թէ Սրբազան Տեղակալը և թէ Սինոդի այժմեան արդարութեան չաւղով ընթացող միւս անդամները նշանակութիւն չեն տալ Գ. և Ն. եպիսկոպոսների խօսքերին, որովհետև շատ հասկնալի բան է որ գողերը չեն ցանկանալ իրենց մըթում կատարուածները լոյս հանողներին տեսնել»։

ԲԺՇԿԱԿԱՆ

ՕՁԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Երեք շաբաթ առաջ մանկիկ մը պատուաստած էի։ Պատուաստին երկրորդ օրը դիպուածով մանկան ձախ սրունքին եռեւի կողմը կ'այրի։ Պատուաստին վեցերորդ օրը մանկիկը կը տենեմ և կ'ստուգեմ որ պատուաստն երկու թեւերուն վրայ ալ բռնած է։ Եօթներորդ օրը կը տեսնեմ թէ մանկան հիւանդութիւնը պատուաստին հետեւանքն եղած է։ Խելացի Դաւիթներէ ոմանք կ'ըսեն թէ պատուաստը քառասուն օր գոպանի պահելու է, եթէ ոչ՝ պատուաստաւորը նոր կ'առնէ և օձիկ կը լինի։ Ոմանք կ'ըսեն թէ միթէ ձըմեռ ժամանակ պատուաստ կ'ընեն։ Ուրիշներ ալ կ'ըսեն թէ միթէ երեք ամսուան մանկիկ մը կը պատուաստեն։ Ոմանք ալ ըսեր են եղեր թէ մեր գործածած պատուաստը գոմէշի պատուաստ է եղեր և ասկից յառաջ եկած է մանկան հիւանդութիւն։ Ընդհանրապէս ռաւիկներն ալ կը կարծեն թէ օձիկ ախտը բժիշկները չեն կարող հասկընալ։

Նախ և առաջ ըսենք թէ բովանդակ աշխարհի բժիշկներն հաճայն կը յայտարարեն թէ պէտք է պատուաստին մեծ կարեւորութիւն տալ, պատուաստաւոր մանուկները վերջին ծայր զգուշութեամբ խնամել և ինչպէս որ բոլոր բժիշկներն պարտաւորութիւն է մանուկը քսանառողջ եղած ժամանակը պատուաստել, այնպէս ալ հարկ է պատուաստաւոր մանուկը չոգոցներից և մինչեւ իսկ դնդասեղի մը ծայրը մարմնոյն դպցնելէ զգուշանալ։

Մեք մանուկն երկու թեւէն պատուաստեցինք և ոչ թէ սրունքէն։ Գիտնալու է սակայն որ սրունքէն ալ կարելի է պատուաստել։ և երբեմն աղջիկները սրունքէն կը պատուաստեն, որպէս զի պատուաստին սպիներն աղջկանց թեւերուն վրայ չերեւին։

Մեր գործածած պատուաստը քսանառողջ մանկան մը թեւէն առնուած է և ոչ թէ գոմէշէ կամ ասանակէ։ Գիտնալու է հասարակութիւնը որ պատուաստն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ կովու ծաղիկը (Գօռ—Բօքս) զոր մարդու կը պատուաստեն ծաղկէ պահպանելու համար և այժմ կովու ծաղիկն ա՞ինչափ հաղուագիւտ բան մ'է որ՝ ով որ կովերու սոխնքներու վրայ այս ծաղիկը նշմարէ և իմաց տայ, մեծ բարերարութիւն կ'ընէ մարդկութեան, որովհետև երկիւղներ կան թէ պատուաստն իւր առաջուան զօրութիւնը կորուսած է։

Ամեն եղանակի մէջ կարելի է մանուկները պատուաստել և ձըմեռն արգելք մը չէ պատուաստելու, մանաւանդ ծաղկի համաճարակ հիւանդութեան երկիւղներ եղած ժամանակ։ Ամեն հասակի մէջ կարելի է պատուաստել, և ծաղկի հիւանդութեան երկիւղ եղած ժամանակ, ինչպէս այս միջոցիս, ոչ միայն երեք ամսուան մանուկներն, այլ նաեւ երեք օրուան և երեք ժամուան նորածինները կը պատուաստեն։

Օձիկ ըսուած հիւանդութիւնն դաւոյի կը սեպնք թէ բժշկութիւնը շատ լաւ կը ճանչէ զայն և անոր նշկարագրութիւնն պիտի տեսնեն ընթերցողք թէ նորածին մանկանց և դիւցիկ երախայից օձիկը կարծուածին չափ թեթեւ հիւանդութիւն մը չէ, մանաւանդ եթէ պատուաստի ժամանակ ամենաթեթեւ խալիսուած կամ այրուց մը պատահի անոնց։

Օձիկ (Եբեւէբեւ, Եբլանձբ) կոչուած հիւանդութիւնը նորածին մանկանց և դիւցիկ երախայից հաճար շատ սովորական է, և վերջին ծայր վտանգաւոր լինելով լաւ ճանչնալու է զայն։ Աւելի հիւանդացողներու մէջ կը տեսնուի քան թէ մանուսր տուներու մէջ։ Օձիկը գրեթէ միշտ մորթին սահմանափակ բորբոքման հետեւանք է. այսպէս յառաջ կուգայ մանկանց գլխուն, աչքին կամ ականջներուն վրայ բոցֆլա գտնուած ժամանակ, մանկանց ազդրերուն, ամորձաց և շրթունքներուն խայթուելէն կամ այրուելէն, և վերջապէս պորտական լարին ինչպէս գոյացած բորբոքումէ։ Այս պատճառներուն վերջինն ամենէն սովորականն է, և նորածին մանկանց մեծ մասն այս պատճառաւ օձիկ կը լինին։ Երբ պատուաստին պատճառած բորբոքումը սաստիկ լինի, բոլորտիքը խաղաւարտ (ֆլեկմոն) և փոսիտ (կանկրէն) կրնայ գոյանալ և հազիւ երբեմն օձիկ, մանաւանդ համաճարակ օձիկի ատեն, երբեմն ալ օձիկը մանկան ապականեալ կամ ծծելէն յառաջ կուգայ. այսպէս Պ. Ռայէր տեսած է որ մանկիկ մը թանչքէ բռնուած սանտուի մը կամը քանի մը օր ծծելով օձիկ եղած է։

Օձիկն երեւան եղածին պէս տենդը կ'երեւի կամ կ'աւելնայ, և դիւրաւ կը հասկցուի մանկան անհանգստութենէն, քուն չուտենալէն, ծարաւէն, մորթին տաքութենէն և բաղկերակին արագութենէն։

Սկզբնապատճառն ինչ որ ալ լինի, օձիկը միշտ անոր բոլորտիքը կը սկսի և մորթը բորբոքելով կը կարմիր կը ձգտի, կը փայլի և կը տաքնայ։ Օձիկին վրայ մատով ճնշուած ժամանակ սաստիկ կը ցաւի, մատը թեթեւ նշան մը կը թողու և օձիկին կարմրութիւնն անյայտ լինելով կը ճերմկի, յետոյ ճնշումը դադրածին պէս իւր առջի կարմրութիւնը կը ստանայ։

Մորթին այս բորբոքումը մերձակայ մասանց վրայ կը տարածուի սրունքներէն դէպի տաքերը, ազդրերը, ծննդական գործարանները և որովայնը. բազուկներէն և վիզէն դէպի գլուխը, իրանը, և վերջապէս ստորին անդամները կը տարածուի։ Մի և նոյն տեղը տասներկու կամ քսանեւչորս ժամ կը մնայ, և ուրիշ տեղ տարածուած ժամանակ՝ առաջին մասերն իրենց գոյնը և ուռեցքը կը կորսընցնեն։ Այս հիւանդութեան թափանցիկ ընթացքը շատ նշանաւոր է, ամեն օր մարմնոյն մէկ ուրիշ մասը կը դրաւէ մինչեւ որ մարմնոյն ամեն մասանց վրայ իւր շրջանը լրացնէ։ Երբեմն իւր պարտած մասանց վրայ կրկին կ'երեւի։

Փոքրիկ երախայից վրայ օձիկին կարմիր գոյնը՝ իրանին և անդամոց վերին մասերուն վրայ աւելի աչքի կը զարնէ։ Երբ հիւանդութիւնը ոտքերուն ու ձեռքերուն վրայ տարածուի, կարմրութիւնը թեթեւ կը լինի և թեթեւ վարդի գոյն կը ստանայ։

Օձիկէ բռնուած մասունք միշտ կուռեւեան, սակայն այս ուռեցքն իրանին վրայ այնչափ յայտնի չլինիր. ընդհանրապէս ոտքերն ու ձեռքերը սաստիկ կուռեւեան և երբեմն թափանցիկ կը լինին։ Ասունք են ընդհանրապէս նորածին երախայից և դիւցիկ մանկանց օձիկին տեղական ախտանիշերը։

Ընդհանուր ախտանիշերն երթալով սաստկութիւն կը ստանան, մանկանց դէմքը բոլորովին կը դեղնի և չշթունքները բաց գոյն մը կ'առնուն, բաղկերակը սաստիկ կը տարանայ և կերդի։ Մանկիկը փըխոմն և փորհարութիւն կունենայ, և երբեմն ալ ջղաձգութիւններ կը պատահին, որք այդ տարաբաղդ մանկանց վախճանը կը փութացնեն։

Այս հիւանդութեան տեւողութիւնը շատ փոփոխական է. սակայն մերձաւոր հաշուով երկուքէն չորս շաբաթ է։ Շատ քիչ անգամ կը բուժի և մահը սովորական հետեւանքն է։ Ըստ Պլաշի, Պառոնի և Թրուսոյի դիտողութեանց, նորածին մանկանց օձիկն անպատճառ կը մեռցնէ, մինչդեռ աւելի մեծ տղայոց օձիկը երբեմն կ'ապէկնայ։

Մինչ պարզ օձիկը չէ որ տղայոց մահ կը պատճառէ։ Երբ օձիկէ բռնուած մասունք շարաւալից լինին և փտախտի եսթարկին, նոյնպէս մահ կը պատճառեն, մանաւանդ նորածին երախայից։

Ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ նկարագրութենէն, մանկանց օձիկը վերջին ծայր ծանր հիւանդութիւն մ'է։ Նորածին տղայոց ամենքն ալ կը մեռնին։ Քիչ մը աւելի մեծ տղայք կրնան երբեմն դիմանալ այս հիւանդութեան և բուժիլ։

ՏՈՌԹ. ԵԴՈՒԱՐԴ
Կ. ԻԹԻԹԻՃԵԱՆ

«ՊՕԼՍԵՑԻ ՊԱՏԱՆԻՆԵՐ ԵՒ ԱՑՎԱՋԵԱՆ ԽԱԲԵԲԱՑՆ»

Այվազեան էֆէնտի, ազգային երեսփոխան, փոխ-խմբագրապետ և այլն, չքռնաւ, կորաւ։ Այո՛, բերեց Պոլսից մի փոքրիկ բանակ խեղճուկ պատանիների, վեր վարեց այս կողմերում և փախաւ։ Երեւելի զօրապե՛տ, այդպիսի քաջութիւն կարող էր ցոյց տալ մի միայն Այվազեան էֆէնտի կոչուածը...

Հետաքրքրական է թէ՝ ի՞նչը կարող էր սարսել Այվազեանին՝ յիշեալ քաջագործութեան հեղինակ դառնալ. արդեօք Հերոստրատէսի հարքա՞ը կուզէր վարել հոյց մէջ, վերին աստիճանի թեթեւամտութեան մի օրինակ ցոյց տալով, թէ սոսկ խաբեայ մի ոճիր է այդ թշուառականը։ Այս խնդիրը դրական կերպիւ լուծելու համար հարկաւոր է մեզ դէմ համառօտակի յիշել թէ՝ ի՛նչ դրութեան մէջ էին մինչեւ վերջին օրերս այն խղճալի զուակները, որոնց ծնողք վստահացել էին նոցա բաղդը յանձնել Այվազեանի ձեռքը։

Նախ և առաջ՝ նոյն իսկ հասակաւոր պատանիներից տեղեկացանք, որ Այվազեանը յաջողած էր իրանց ծնողներից բաւական քանակութեամբ ոսկիներ հաւաքել իբր ճանապարհածախս՝ տղայոց ամեն յարմարութեամբ մինչեւ Էջմիածին հասուցանելու։ Ինչպէս հաւատացրին մեզ, 10 Օսմանեան ոսկիէն պակաս տուող չէ եղած, իսկ երկու անգամ առաւել տուողներ՝ շատերը։ 2) Ընալելով ճանապարհածախսից գումարի լիակատար բաւարարութեան, Այվազեանը ճանապարհի վերայ՝ Բաթում, փոթի ոկսած է զանազան ստայօդ ճառախօսութիւններով դրամներ հաւաքել ի նպաստ իբր չքաւոր և խղճալի պատանիների։ Կ'ըսուի թէ օրինակ՝ փոթիի հարուստ վաճառականն Պ. Պոպովից և այլն բաւական մեծ նպաստ է ստացել։ 3) Ցայտնի է որ Այվազեանը միւնոյն ձեւերը բանեցրեց, երբ իւր բանակը Թիֆլիս հասցրեց. ամեն կերպ աշխատեցաւ այդ բանակի վերայ իւր գրպանից ծախս չանելու, այլ զանազան անսպասելի ձեւերով մի քանի յայտնի անձանց միջոցաւ տղայոց ապրուստը հոգալ։ Պ. Զիթախեանն էր, օրինակ՝ տղայոց իւր խանի մէջ բնակարան տուողը, նոցա շատ անգամ կերակրող, և ի վերջոյ ճանապարհածախսը, որքան լսած ենք, մինչեւ Էջմիածին հոգացողը։

Բացի այս ամենը, տղայք իրանք պատմում են թէ՝ իրանցից մի քանիսը, որ կարողաւոր գերդաստաններից են, ունեցած են առանձին գումարներ եւս, զանազան անսպասելի դէպքերի համար ծնողաց կողմանէ տրուած իրանց։ Այվազեանը այդ մանաւոր գումարներն եւս կարողացել է զանազան աններելի հնարներով տղայոց գրպաններից դուրս կորզել, զանազան առիթներ հնարելով նոցա դրամներից իրան վերաբերեալ ծախսերը անել տալու...

Այս կերպով Այվազեանը տղայոց վերջապէս Էջմիածին է հասուցանում։ Այն տեղի միջադէպերը պատմելը երկար վիպասանութեան բաներ են։ Այսքանը միայն յիշենք, որ երբ Այվազեան էֆէնտին յայտնի եղած է թէ՝ ի՞նչ ծանր գրութեան մէջ դրած է մերձ ի մահ հիւանդ վեհափառին և Մանկունի եպիսկոպոսին, թէ ամեն տեսակ զիջումներ յանձն առնելով, ամեն հնարք մտածելով՝ ճեմարանի վարչութիւնը հազիւ կարողացել է 8 տղայ ընդունել ճեմարանը և չորս տղայ էլ մասնաւոր անձանց մօտ պահպանել, մնացած 18 հոգին պիտի վերադարձուին ի Պոլիս—երբ այս ամենը իմանում է Այվազեանը դալիս է խեղճ պատանիներու մօտ ասելով թէ՝

«Զաւակներս, փառք տուէք Աստուծոյ, գործը լմնցուցի, ձեզ ամենիդ ճեմարանը ընդունել տրուի, այժմ կը մնայ, որ շնորհակալութեան նամակ մը տաք իս, և ստորագրէք այն ճանապարհային ծախքերը, որ ձեր վրայ աւելորդ իմ գրպանէս ըրած եմ։»

Խեղճ պատանիք և մանուկները ուրախացած, որ իրանց նպատակին հասան, ճեմարան ընդունուած են, առաջարկեալ շնորհակալութեան և ծախուց թուղթը կ'ստորագրեն։ Այս թուղթը առած՝ Այվազեանը ծածուկ կերպով կը հեռանայ էջմիածնից. թէեւ հեռագիր կուգայ ցաճկայ հիւպատոսին բռնելու Այվազեանին Թիֆլիզում, սակայն Այվազեանը կը յաջողի հիւպատոսին եւս խաբել՝ ցոյց տալով տղայոց շնորհակալութեան գիրը... և Գաղղիական նաւով փոթիից կը հեռանայ։

Գէորգ Դ. կաթողիկոսի մահից յետոյ՝ ի՞նչ կարող էր կարգադրել էջմիածնայ Սիւնհոդոսը անտէր մընացած պօլսեցի պատանիների մասին. Ցէնէրճեան Յովակիմ ազան դեռ հասած չէր Ներսէս Պարիարքի յանձնարարականով վահրամ եպիսկոպոսին ուղղած. Հասած եւս լինէր, առանց դրամական մեծ օժանդակութեան ինչպէ՞ս պիտի կարողանային այնքան տղայոց ճեմարանից դուրս առանձին պաշտպանել մինչեւ գարունը, օրպէս յանձնարարած էր Սրբազան Պարիարքը...) Սիւնհոդոսն ստիպուած էր՝ հոգալով ճանապարհի և կերակրի ծախքը մինչեւ Թիֆլիս՝ վերջապէս ճանապարհել տղայոց իրանց տեսակ Գրիգորի հետ (որ հաւատարմութեամբ մնացած էր տղայոց ներքուստ թիւնները մասնակցելու, իւր զաւակն էլ նոցա հետ ունենալով) դէպի Թիֆլիս, որպէս զի մնացեալը այստեղից հոգացուի։ Անցեալ շաբաթուայ վերջը տղայք եկան հասան տեղս։ Բայց, Ցէր իմ և Աստուած ի՞նչ տպաւորի գրութեան մէջ դտանք խղճալի պատանիներին... Առանց որ և է տաք վերարկուների. հագուստները անկարգ գրելի կերպով պատառոտած, շատերը բոբիկ, գլխաբաց (ֆէսերը կորցրած էին), գունաթափ դէմքերով, բաղցեալ և բոլորովին լքեալ դրութեան մէջ...։ Դարձեալ Պ. Յ. Զիթախեանը բարի եղած էր իւր հեռաւոր մի խանի մէջ խղճալիներին պատսպարելու, նոցա օրական պաքէնն հոգալով։ Պարսափելի տարան էր ներկայացնում այն տեսակը, ուր ողորմելի պատանիներ գետնի վերայ վեր-թափուած՝ պառկուած էին մէկը միւսին կոխ եկած՝ որ այդ կերպ տաքանան այս ձմեռ ժամանակին։ Բայց աւելի սարսափելին այն էր, որ նոցա մէջ մի քանիսը տենդային հիւանդութիւնով եւս տառապում էին... Հիւանդները սկսեցին խնամել նախ Դոկտոր Շիշմանեանը և ապա Դոկտոր Բաբայեանը, Թիֆլիսի հայ հասարակութիւնը չսպասելով այլ եւս երկար՝ Պօլսեցի անհոգ և զարմանալի ծնողների կարգադրութեանը՝ շտապեցին ամեն կերպ օժանդակութեան ձեռք կարկառել Այվազեանի զոհերին վերահաս վտանգներից ազատելու և իրանց գերդաստանների գերկը հասուցանելու։

Այս բոլոր հանգամանքները յիշելուց յետոյ՝ ի՞նչ անուն տալ Այվազեանին, որ իրան հոգատարութեան յանձնուած այսքան պատանիներ՝ պանդխտութեան և ամեն տառապանաց մատնելով, ինքը՝ իւր գրպանները ոսկիներով ծանրացուցած կը փախչի... Այվազեանի արածը դեռ չլսուած՝ չտեսնուած ոճրագործութիւն է՞...

Եւ այսպիսի ոճրագործը դեռ պիտի շարունակէ ազգային երեսփոխա՞ն կոչուիլ... բոլորովին անպատի՞ժ պիտի շարունակէ իւր անմիտ ճառախօսութիւնները Պօլսոյ թերթերը զարդարել...

Բաւական է։ Այվազեանը իւր այս սարսափագործութիւնով ոչ միայն իւր ինչ լինելը ցոյց տուեց, այլ և մեր Պօլսեցի ազգայնոց բաւական մեծ դասի զարգացման աստիճանը երեւան հանեց, որ կարող են իրենց զաւակաց բաղդը դիւրութեամբ և առանց երկար հարց ու փորձի այսպիսի անձի հաւատալ...։

(Աբիւռեան, 1 դեկ.)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿԻԼԻԿԻԱ

(Մեր թղթակցէն)

(Շար. եւ վերջ)

Պատեհ առիթ է ասա՝ պատասխանել Տ. Խաչիկ Տատուրեանի դիտողութեանց. զոր 2–3 ամիս առաջ Զէյթունի մասին գրած նկարագրութեանս նկատմամբ ներկայացուցած էր Պատ. Մասի ի 3320 թուով։

Տ. Խ. Տատուրեան երեք կէտերու սոփոփած էր դիտողութիւնները։ որոց դատ դատ բացատրութիւն տալ կ'ուզեմ համառօտիւ։

Ա. — Վաղահաս ամուսնութեանց մասին եթէ իրօք չափազանցութիւն կայ, չգիտեմ, այդ մասին չեմ կարեր պնդել այժմ. հաւանական էր որ Զէյթունի մէջ ինձ տեղեկութիւն տուողն այսքան չափազանցած լինի, — թէեւ պատուաւոր երիտասարդի մի, մի քանի շաբաթէ յետոյ 9 տարեկան օրիորդի մի հետ ամուսնանալու լուրը սաստկ կերպով ստացած էի անդ, եւ ես կը ճանաչեմ երիտասարդը, — սակայն չը կրցի հասկնալ թէ ո՞ւր է այն «ծանր ամբաստանութիւնը. զոր բոլոր հոգեւորականաց եւ ժողովրդեան բարոյականին դէմ ընելու» յանդգնած էի, եւ միթո անհնա՞ր է նոյն երեւոյթները կատարելապէս տեսնել Արապկիրի բաղմամիւռ գիւղերից մէջ, ուր տասնամեայ օրիորդաց ամուսնութիւնը սովորական է։ Ցարբերութիւնը այս է որ Զէյթունի մէջ երիտասարդը աւելի չափահաս կը լինին։ Բայց «միթէ բնական է՞ որ 10 տարեկան աղջկունք հաւժկու երիտասարդաց հետ ամուսնանալով ցաւրա կլինայի տակ, մանաւանդ աղքատութեամբ եւ (Նամէ հրամի) կեանքով առդդ ծնունդ արտարին», ընտանութիւնն ալ ունի իւր բացառութիւնները, լաւ եւս, իր զարմանալի կողմերը։ Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան մասը, մի քանի տեղեր ճիշդ այս վիճակն ունին եւ առդդ են։ «Նամէ հրամի» դրութիւնն գեղեցկութեան արգելք է, — ինչո՞ւ տաճկաց գեղեցկութիւնը նշանաւոր է։ Աղքատութիւնը միշտ կը ազեամցնէ,—ինչո՞ւ Մշեցի կանայք, աղքատութեան գերիներ, կայտառ են եւ ուժեղ։

Բ. — Տ. Խ. Տատուրեան Զէյթունի արական սեռի գեղեցկութիւնը ցուցընելու համար, թերեւս անդիտակցաբար, կը շփոթէ գեղեցկութիւնը քաջութեան հետ։ «Լերանց հովտաց (՞) զաւակներու գեղեցկութիւնը չի նմանիր մեծ քաղաքներու երիտասարդաց կանացի քընքշութեան, այլ առնի եւ Ջղաղինդ, սէդ եւ վեհ կը լինի»։

Կարդունելով իսկ թէ, Զէյթունի յարդի ընիկի մը ըսածին պէս, Զէյթունցից իրօք առնի, սէդ, Ջղաղինդ եւ վեհ են, ասկէ կը հետեւի՞ թէ գեղեցիկ ալ են։ Գեղեցկութիւնը մեք տարբեր նշանակութեամբ կը հասկընանք։ Ներկարելու համար, ընթերցողին կը թողում դասել բացատրութիւնը։ «ոգեղ սեռն ոգեղագոյն եւ նիհարագէմ է, թեւեւ ուժեղ եւ քաջասիրտ»։

Գ. — «Զէյթունի հայերէնը Հօթենթօթերէն կամ Ընարէն թուած էր Այնթապցի «Հայասոս» թղթակցին, մինչդեռ այս հայերէնը, շատ համաձայնութիւն ունի դրաբարի շարադրութեան» հակասութիւն չէ այս։ — երբէք։ Եւրոպական եւ Ասիական թերեւս նաեւ վայրենի լեզուաց ոմանց մէջ դրաբարի շարադրութեան համաձայնութիւն կայ, ասիկայ պարաք կը դնէ որ հանկամք այն լեզուները, քանի որ բառերը խորթ եւ օտար են։ Զէյթունցի մ'ալերը իւր պանծալի լեզուով կը հայոյէ եւ կ'երդնու։ կը բարկանայ եւ կ'երգէ, արագախօսութիւն, վանկերու եւ տառերու կրճատում, բառերու աղաւաղում, եւ այն, զարմանալի է որ բոլորովին օտարացնեն եւ Զէյնարէն թուելու աստիճան օտար քաղաքացիի մը, մինչեւ իսկ եթէ այս «քաղցրահնչիւն» բարբառը— զոր չգիտեմ ի՞նչպէս կարենք նախագասել Վերին Հայաստանի շատ մը գաւառաբարբառներուն — բան ամենայնի աչխարհարարի շարադրութիւն ունենայ։

Եւ ի՞նչ հարկ կար ի զուր յոգնելու։ քանի որ, մանաւանդ, Էջ ի ը ուած թէ «Զէյթունի լեզուն Ջ. ն. ն. ն. կամ Հօթենթերէն է» այլ «. . . . . ցոյ»։ Բնական տարբերութիւն կա այս բառերուն մէջ. զոր Տ. Խ. Տատուրեանի չափագնդ. հ. ր. ն. ա. ր. թիւնը արգելած է զատանելէ։

Ա. Ն. Թ. ապ
16 դեկ. 1882

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աշխ. Տ. Նոեմեան Տեսչութեան

Բերայի Նախորդ թաղական խորհուրդը թաղային մասուկին մատակարարութեան եօթնամսեայ հաշուեցուցակն որ կ'սկսի 1882 մայիս 1է եւ կը յանգի ցվերջ նոյեմբերի նոյն տարւոյ։

Նոյնպէս Գուզկունճուզի նախորդ թաղական խորհուրդը իւր պաշտօնավարութեան հաշուեցուցակն՝ սկսեալ 1880 յունվար 1է ցվերջ դեկտեմբերի 1882 տարւոյ։

Տնտեսական տեսչութեան մատուցած են ըստ օրինի, եւ այն հաշուեցուցակաց պարունակութիւնը տումարաց հետ բաղդատուելէ յետոյ անոնց յարեւ եւ նման եւ կնքեալ օրինակներն իւրաքանչիւր եկեղեցւոյ բակը կախուած են ի տես ժողովրդեան։

Տնտեսական տեսչութիւնն այսու պաշտօնական ծանուցմամբ կը հրաւիրէ զմաղեցի ազգայնս, որ իրենց ընտրեալ թաղին եկեղեցւոյն վերաբերեալ հաշուեցուցակին վրայ որ եւ է բողոք կամ դիտողութիւն եթէ ունին, ներկայ ծանուցմանս թուականէն մինչեւ 21 օր պտմանաժամու փութան դրաւոր կերպիւ ներկայացնել Տնտեսական Տեսչութեան։

17 յունվ. 1883
Կ. Պոլիս

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
Կ. Ա. ԻԹԻԹԻՃԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՁԱՔԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պոլիս Զաքիքէլար եօթներորդ թիւ 62

Սոյն վաճառատան մէջ կը պատրաստի գրասեղեկի վերաբերեալ [illegible] պէս նաեւ գարեցուկան և [illegible] տեսակ ընտիր [illegible] բամաչելի գներով։ Հայկ կա[illegible] ճառատունը պատրաստ է նաեւ ընդունել տպագրութեան և վանագրութեան վերաբերեալ գործեր, որպէս և ամեն տեսակ յանձնարարութիւնք և գործակալութիւնք թէ Պոլսոյ և թէ դաւառներու համար։

Այս առթիւ կը ինդրուի բոլոր յառաջադիմասէր ազգայիններէ՝ որ փոխանակ մի օտարական Սինեբրէ դիմելու և անկէ գներու իրենց պէտքերը, բարեհաճին քաջալերել մի Հայկական վաճառատուն՝ որոյ նպատակն է և պիտի լինի ուղղութիւն։

ԱԶԴ

Վախճանեալ մեծանուն Լէոն կամպէթտի վիմագիր պատկերը կը ծախուի կանուրջին վրայ լրագրավաճառաց քով. դին 4 գրուշ։

La publicité de l'etranger est exclusivement remise à l'Eastern Agency, Constantinople Karaekuy Déirmen Han

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿՈՒՆԵԷԹ-ԻԼ-ԼՈՒՂԱԹ

ԲԱՌԳԻՐՔ

ՖՈՒԱՆՍԵՐԷՆԷ Ի ԹՈՒՐՔԵՐԷՆ

Աշխատասիրութեամբ

Շէ-էրէ- Ե Մէ-ոյէլ Էֆէնտիէրոս

Անդամոց Հասարակաց կրթութեան պաշտօնական Գրաքննութեան սենեկի Հրատարակիչ Գաբրիէլ Պաղտասարեան

ՏԵՍԸ 18ԳՐ

Հրատարակութիւն Ս. Հրէշտակապետաց Լրտեսական Կ. Պոլիս Օրհնութեամբ

ՏՕՌԹԷՕՌ ՍԱՖՈՒԷ

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Համառօտաբար)

ԹԵՐԹ Գ.

Կապար, անագ, զինկ. Ոսկի եւ արծաթ. Քարահանք եւ հանք. Զարդարուելու սեղան. կտաւ։

ԹԵՐԹ Դ.

Կանեփ, բամբակ, բուրդ, մետաքս, հիւսուածներ, կաշի։

Գիր իւրաքանչիւր թերթի մէկ դահեկան։ Շատ գնողներու գոնացուցիչ զեղչ կը լայ։ Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով։

ՖՐԷՏ, ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Ուղղակի՝ առանց փոխադրութեան կը բռնէ Լիվերբուլ և Արեւելեան գծեր։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Աշիրեան	2,500	Ֆոլգնեան	3,700
Աւստրօ-	2,500	Ֆլորինեան	3,700
Անգլոսաքսոն	2,500	Ֆլավիան	3,700
Արիեան	2,500	Իպերեան	5,500
Արապեան	3,700	Իւլիսեան	5,500
Պավարեան	6,000	Իտրուրեան	5,500
Պոլիսեան	6,000	Լուսիտանեան	2,200
Քառասնեան	800	Լիկոմեդեան	2,500
Սայրենեան	2,000	Լիսպոն	800
Տորոն	700	Օքսֆորդ	700
Էմիրեան	3,700	Բերլին	3,800
Ֆապեան	3,700	Վալենսիան	6,800
Ֆալերնեան	3,700	Վիրջինեան	6,800

Արիեան շոգենաւը (նաւապետ Քրիսիդիան) յունվար 27ին Լիվերբուլէն կ'սպասուի։

Շաբաթական շոգենաւերու նոր գիծ մը հաստատեցաւ Լիվերբուլի եւ Պոսդընի միջեւ, եւ ստորագրեալս հեռագրեկէ զատ ուրիշ վաճառք կ'ընդունի օրինաւոր սակագներով։

Ուղեւորները համար ամեն տեսակ կ'ընդայոտ։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԴԷՆ Գործակալ

թիւ 34, 35, 36, Էնէնի Միլլէթ խան, Գալաթիա

Նաւատեարք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ եւ ընկ. Լիվերբուլ

Գործակալներնիս՝

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնդէն.
Ճիպրալդար, Պ. Պ. Քարվէր եղբարք.
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վանման եւ ընկ.
Մալդա, Ա. Քամիլերի.
Շիրա, Ա. Մ. Մավրոկօրտատոյ.
Զմիւռնիա, Պ. Ուիդոլ եւ ընկ.

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԼԻՎԷՐԷՈՒԼ ԼԻՄՈՒՐԷՐՈՒՆԻ ԴԷՊ Ի ԲԱՌՆ ՀՈՍԵԼՈՒ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբոս	4,200	Ողէրիս	3,000
Ֆորս	4,000	Նէբրիս	3,000
Օսմանլի	4,000	Բէրս	3,000
Սէսոստրիս	3,250	Իպէս	2,600
Թէզէ	3,250	Ադլանտէ	1,700
Մակեդոնիա	3,250	Լոքրոս	800
Նէր	3,250	Օլինթոս	800
Մարէ օրիս	3,250	Սէնէլ	750

Ադլանտէ շոգենաւը, նաւապետ Սգիւրդ, Լիվերբուլէն կը հասնի դէպ ի 30 ներկայ ամսոյս։

Վերոյիշեալ շոգենաւք չքեղապէս յարդարուած են ճանապարհորդներու համար։

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈՒ, եւ ԸՆԿ. Գործակատար

Մէյտանլըգ սօգաղ, Պոլիս

կամ առ Պ. ՆԷՎԻՏԼ Է. ՄԱԼԹԱՍ

թիւ 1 եւ 3, Նարլեան խան, Վոյվոտա փողոց, Գալաթա.

Ցնօրէնութիւն, Լիվերբուլ,

ՋԷՅՄՍ ՄՈՍ եւ ԸՆԿ.

31, Ճէյմս Սգրիդ, Լիվերբուլ.

Գործակալներնիս՝

Ալեքսանդրիա Ռ. Ճ. Մոս եւ ընկ.
Պէյրութ Ց. Բաթիթարաքի
Կ. Պոլիս Ց. Վ. Ուիթոյ եւ Ընկ.
Դարդանէլ Ֆրանք Քալվէրթ
Ճիպրալթար Սմիթ, Իմոս եւ Ընկ.
Մալթա Սմիթ եւ Ընկ.
Իզմիր Լէվի, Ֆրանք եւ Ընկ.
Զմիւռնիա Պ. Ք. Ուիթալ եւ Ընկ.
Շիրա Ն. Ք. Բէզրոքուլոյ

ՔԻԻՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Ուղիղ ամբողջ դէպ մ'անգամ կը բռնէ Լիվերբուլ և Մէնչեսթրէն։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Օրանիա	7,000	Մալմա	3,000
Ադրիա	3,000	Մորավիա	2,500
Ալբիոն	3,000	Նարվիկ	2,500
Պորտնիա	4,600	Բավարիա	5,000
Պոհեմիա	3,800	Բուրգոս	3,200
Պալտիկ	2,500	Բուլգարիա	3,000
Պրէմեն Բրէմեն	1,200	Սէրվիա	7,800
Սկիպլանիա	5,000	Սէրբիա	4,600
Քարթագինիա	4,700	Սարմատիա	3,000
Շեղդոնիա	2,000	Սամարիա	3,000
Տէվոնիա	2,500	Սկան	3,000
Կուլլէա	4,000	Թրինգիա	3,000
Քէրոբ	2,500	Թրինիդատ	2,500
Մարմոր	3,000		

Մարոտտ շոգենաւը, նաւապետ Պրաուն գալ շաբաթու կ'սպասուի Լիվերբուլէն։

Սատարագրեալս արտօնութիւն ունի ճանապարհորդ եւ վաճառք ընդունիլ Նիւ Եորքի եւ Պոսդընի, ինչպէս նաեւ Միացեալ-Նահանգաց ուրիշ կողմերուն համար՝ օրինաւոր սակագներով։

Դիմել առ.

ԹՈՄԱՍ Զ. ՃՈՒԼԻ, Գործակատար.
թիւ 1 Քիւչիւք Հալիլ փաշա խան Գալաթիա։

Ցնօրէնք ընկերութեան

ՊԵՐԻՆՍ ԵՒ ՄԱՔԻՎԷՐ

1, Ռըմֆորտ Սթ. Լիվերբուլ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Գալաթիա 18 յունվ.

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ

(Օրմ ոսկին 100 գրուշի հաշուով)

Լոնտրա 3 ամիս, գրւ.	110 3/4 առ Անգլ. լիր
Փարիզ 3 » Ֆր.	22.70 առ Օսմ. լիր

ԸՆԹԱՑՔ ԱՐՔԵՆԹՊՈՒՆ

Օսմ. Քանու գոցուածքաւ (գ. կ.)	12,23
բացուածքաւ	12,24
կէս օրին	12,24
Սպիտակ միացեալ բաց. ոսկի	78,20 Անգլ. լիր
Սօսիէթէ ֆէնէրալ 6 0/0	5,15
» Օթման	4,
Կ. Պոլսոյ Պանքան	9,
Քրէտի ֆէնէրալ 6 0/0 Օսմ. լիր	6,
Փոխ. 1863 (Մութոն) 6 0/0 Ֆր.	73
» 1865 » 6 0/0	71,
» 1869 (Բինար) 6 0/0	63,
» 1872 (Պօն ատիւ թրէզօր)	23,50
» 1873 (Բինար) 6 0/0	53,50
Ռումէլի երկաթուղի	53,
Լաւրիուտ (գ. կ.)	165,
Թրամուայ Օսմ. լիր	545,
Թաքսիրատ »	910
Էվալէթիպ	20
Ոչխար	—

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

(Օսմ. ոսկին 100 գրշէն) Գրշ.

Անգլիական ոսկի	110 25
Գերմանական »	88
Հոլ	80 15
Գրամոց	51 25
Գաստարոն Թուղթ (գաբիք)	921
» արծաթ (նոր)	90 30
Մէնիսիէլի առուտրութիւն	108 6
Վենետոց	104 10
Լինգոց	104
Մէնիսիք	102

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 29 յունվ.

Անգլ. Քանս.	102 5/16
Օսմ. »	11 1/4
Փոխ. 1865	13 1/4
» 1869	12 1/4
» 1871	71 3/4
» 1872	22 3/4
» 1873	10 7/8
» 1877	83 3/4
Պանք Օթման	83
Ռուս. փոխ. 75ի	17 1/8
Եգիպտ. միացեալ	81 7/8
» արտաքսուած	92 1/4
Տայրա Սանիէ	70 7/8
Փոխ. Ռոչիլտ	92 25
Թուրքական փարիզի վրայ	25,45

Փարիզ 29 յունվ.

Գաղղ. Քանս. 3 0/0	115·97,50
» » 5 0/0	78·12,50
Օսմ. Քանս	11·40
Փոխ. 1865 Ֆր.	65
» 1869	60
» 1873	54
Օսմ. Երկաթուղի	51,75,
Պանք Օթման գ. կ.	705,
Քրէտի Լիոնէ գ. կ.	555.
Ռուս. փոխ. 3 0/0 (1877)	88 75
» » Արեւելեան	—
Իտալ. Քանս.	86,20
Եգիպտ. միացեալ	555,
Թուրքական Լոնտ. վրայ	25,21

Վիէննա 29 յունվ.

Փոխ. Լոնտրայի վրայ	120,05
Ռումէլի երկաթուղի	24,50

ԿԷՍ ՕՐ 6,42

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ԴԵՂԱՐԱՆ

Պ. եւ Հ. ՔԻԻԶԻԻՔԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Երկար ժամանակէ ի վեր՝ դեղավաճառութեան և դեղագործութեան զբաղելով հասարակութիւնը գոհացնելու համար մեր ձեռքէն եկած ջանքը խնայած չըլլալնիս յայտնի է մեր պատուարժան յաճախորդաց և բոլոր հասարակութեան։ Այս անգամ, մեր յարգոյ յաճախորդաց դիւրութիւն մ'ըլլալու համար դեղարան մը բանալու փափաքելով, չատ տարիներէ ի վեր ամենուն Ծանօթ Պոլսոյ Եէնի-Ջամի փողոցի 26 թիւ «Պ. եւ Հ. Քիւչիւքեան եղբարք» անուամբ դեղարան և մթերանոց (տէբօղիթօ) մը ալ բացած ենք, ուր Ֆրանսայի, Անգլիոյ և Դերմանիոյ քիմիական բաղադրութիւններն ու գանազան դեղերը մեծ խնամով շինուած, և ամենէն ընտիր տեսակները կը գտնուին և աժան գնով կը ծախուին։ Ասոնցմէ զատ, ամեն ատեն գործածուած գանազան տեսակ գինի, ազնիւ ձկան իւղ, քոնեաք և ուրիշ ըմպելիք միշտ կը գտնուին, ինչպէս նաեւ ամեն տեսակ գործիքներ։ Եկած դեղերը իսկոյն թարմ դեղերով, աժան գնով և մեծ խնամով կը պատրաստուին։ Ասոնցմէ զատ դեղարանին վերնայարկը բժշկաց համար յատուկ տեղ որոշուած ըլլալով, հիւանդութեան մը համար բժշկի հետ խորհրդակցիլ ուզող անձինք, մեր դեղարանը գալով, ամեն կերպով օգուտ կը տեսնեն։

Դարձեալ հռչակաւոր բժիշկ Մեծ. Տօքթ. Արապեանն ալ որ իւր ճարտարութեամբը շատ տարիներէ ի վեր ամենուն ծանօթ եղած է, երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ժամը 6—8 մեր դեղարանը պիտի գտնուի։

ՇԻՐՔԻԹԻ ԽԱՑՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1883 ՅՈՒՆՎԱՐ 1 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՎ. 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ

Եւրոպական Եղբէտ

2 Եէնի մահալլէէն Մէզարպուրնու, Պէյօիւքտէրէ, Թարապիա, Եէնիքէ։ (Եէնիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 19

2 35 Եէնիքէյ. Սթէնեա. Էմիրկ. Պէյանքէյ. Բ. Հիսար. Պէպէք. (Սրնավուտգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 18

3 Բ. և Ա. Գավագ. Եէնիմահալլէ. Մէզարպ. Պէյօիւքտ. Թարապ. Եէնիքէ. (Եէնիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 20

3 30 Եէնիքէ. Սթէն. Էմիրկ. Պէյանք. Բ. Հիսար. Պէպէք. (Պէպէքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 25

4 30 Եէնիմահ. Մէզարպ. Պէյօիւքտ. Թարապիա. Եէնիքէ. Սթէն. Էմիրկ. Պէյանք. Բ. Հիսար. Պէպէք. Սրնավ. Գուրուչ. Օրթաքէյ. Պէչիկթ. (Ուրբաթ օրերը Սթէնեա) 32

10 Մէզարպուրնուէն Պէյօիւքտէրէ. Թարապ. Եէնիքէ. Էմիրկ. Բ. Հիսար, Արնավ. Օրթաքէ. Պէչիկթ.

Աբնավուտ ճեղ

2 Պէպէք, Արնավուտաք. Գուր. Օրթաքէ. Պէչիկ. 32

2 45 Արնավ. Գուր. Օրթաքէ. Պէչիկթաշ։ 4

3 15 Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաքէ. Պէչիկթաշ Գապաթաշ. 28

4 Արնավուտաք. Գուր. Օրթաքէ. Պէչիկթաշ. 18

4 30 Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաքէ. Պէչիկթաշ, Գապաթաշ։ 19

10 35 Պէպէքէն ուղղակի կամուրջ։ 19

Ասիական եղբէտ

1 45 Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապաթ. 25

2 15 Պէյքօզ, Բաշապ. Բ. Փ. մտհալէ, Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլի (Գանտիլիի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։

2 30 Գանտ. Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ. (Երկուշաբթի օրերը Իսկիւտար չպիտի հանդիպի։) 1

3 30 Պէյօիւքտ. Թարապ. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. (Գանտիլի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 17

Ուրբաթ օրերը Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ.

5 30 Գանտ. Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապաթաշ։ 21

4 30 Գանտ. Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ. (Բացի ուրբաթէ)։ 25

8 45 Պէյօիւքտ. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիքէ. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկիւտար։ 21

(Ուրբաթ օրերը Բ. փաշա մահ.)

10 25 Վանիքէյէն ուղղակի կամուրջ։ 25

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Եւրոպական եղբէտ

5 Պէչիկթաշ. Օրթաքէ. Արնավ. Բ. Հիսար, Էմիրկ. Եէնիքէ. Թարապ. Պէյօիւքտ. Եէնիմահ. 32

45 45 Գապաթաշ, Իսկ. Պէչիկթաշ, Գուզկ. Օրթաքէ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. եւ Բ. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիքէ. Բաշապ. Պէյքօզ, Թարապ. Պէյօիւքտ. Մէզարպ. Եէնիմահ. 4

5 30 Գապաթաշ, Պէչիկ. Օրթաքէ. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն. Եէնիքէ. Պէյքօզ, Թարապ. Պէյօիւքտ. Մէզարպ. Եէնիմահ. Գավագլար։ 20

6 45 Իսկիւտար, Պէչիկ. Գուզկ. Օրթաքէ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Բ. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիքէ. Թարապ. Պէյօիւքտ։ 21

8 30 Պէչիկ. Օրթաքէ. Արնավ. Պէպէք, Բ. Հիսար, Էմիրկ. Եէնիքէ. Թարապ. Մէզարպ. Պէյօիւքտէրէ։ 28

10 30 Պէպէք. Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն, Եէնիքէ. Թարապ. Պէյօիւքտ. Մէզարպ. Եէնիմահ. 18

11 10 Եէնիքէ. Թարապ. Պէյօիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։ 20

11 25 Պէպէք, Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն. Եէնիքէ. 19

Ասիական ճեղ

5 30 Ուղղակի Արնավ. 18

4 » Պէպէք։ 19

9 50 Պէչիկթաշ, Օրթաքէ. Գուր. Արնավ. Պէպէք, (Վոսփորի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 19

10 35 Պէչիկթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գուր. Արնավ. 4

11 5 Գապաթաշ, Պէչիկ. Օրթաքէ. Գուր. Արնավ. Պէպէք (Եէնիքէյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։ 1

11 40 Պէչիկթաշ, Օրթաքէ. Գուրուչ. Արնավ. Պէպէք։ 28

12 Պէչիկթաշ, Օրթաքէ. Գուրուչ. Արնավ. 25

Ասիական եղբէտ

2 45 Իսկիւտար, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Եէնիքէ. 25

5 45 Ուղղակի Գանտիլի (Բացի ուրբաթէ)։

6 40 Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիքէ. (Գավաքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 25

10 15 Օրթաքէ Վանիքէ. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ Մէզարպ. Բ. և Ա. Գավագ։ 17

10 50 Իսկ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիքէ. Գանտ. (Պէյքօզի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։ 21

11 10 Գանտ. Ա. Հիսար, Գանլճա Բ. փ. մահ. Բաշապ. Պէյքօզ։ 25

11 40 Գապաթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիքէ։ 32

ԱՐԵՒԵԼԵԱՆ



ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷԻ

Մկրեալ 7 Նոյեմ. (Ն. Տ.) 1882, Ղեկէ- ցնոր պնօրէնութեան

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

ԿԱՑԱՐԱՆՔ	A	4	2	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40
	Աւուր													Իրիկուն							
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս . . . . . Երթ	5 41	6 41	7 15	7 44	8 16	8 47	9 13	10 10	10 35	11	12		12 30	1 47	2 18	2 55	3 25	3 55	4 25	4 58	5 29	6 1
Գում-գաբու	5 51	6 52	7 27	7 55	8 27	8 58	9 24	10 21	10 46	11 11	12 11		12 40	1 58	2 29	3 5	3 36	4 6	4 36	5 9	5 40	6 12
Եէնի-գաբու		6 56		7 59			9 28	10 26	10 51	11 15	12 16		12 44	2 2	2 34	3 9	3 41	4 10	4 41	5 14	5 45	6 17
		7 2		8 5			9 34	10 33	10 58	11 21	12 23		12 50	2 8	2 40	3 15	3 48	4 16	4 48	5 20	5 52	6 24
Սամաթիա	5 59	7 8	7 41	8 11	8 35	9 8	9 37	10 39	11 2	11 27	12 27		12 54	2 12	2 46	3 19	3 54	4 20	4 54	5 24	5 58	6 30
Եէտի-գուլէ		7 20	8	8 24		9 22		10 53		11 41					2 58		4 8		5 8		6 12	6 42
Մաքրիգիւղ			8 14	8 35		9 33		11 4		11 54							4 19		5 19		6 25	
Այ-Սթէֆանոս			8 25							12 3											6 34	
Քիւչիւք-Չէքմէճէ . . . . Ժամանում																						

ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

ԿԱՑԱՐԱՆՔ	B	3	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	1
	Աւուր										Իրիկուն										
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք-Չէքմէճէ . . . . Երթ				7 34									1 35							6 38	6 51
Այ-Սթէֆանոս				7 45		8 42		9 43		11 27			1 46					4 28		5 30	7 5
Մաքրիգիւղ		6 55	7 26	7 58		8 55		9 56		11 40			1 59		3 6			4 41		5 43	7 26
Եէտի-գուլէ	6 6	7 9	7 40	8 12	8 42	9 9	9 43	10 10	11 26	11 54	1 1	1 40	2 13	2 49	3 20	3 52	4 27	4 55	5 31	5 57	
Սամաթիա	6 11	7 14	7 45	8 17	8 46	9 14	9 47		11 31	11 59	1 6	1 45	2 17	2 53	3 24	3 56		4 59		6 2	
	6 18	7 21	7 51	8 23	8 52	9 20	9 53		11 37	12 5	1 13	1 52	2 23	2 59	3 30	4 2		5 5		6 8	
Եէնի-գաբու	6 23	7 26	7 56	8 28	8 57	9 25	9 58	10 20	11 42	12 10	1 18	1 57	2 28	3 4	3 35	4 7	4 37	5 10	5 41	6 13	7 40
Գում-գաբու	6 32	7 35	8 5	8 37	9 6	9 34	10 7	10 29	11 51	12 19	1 27	2 6	2 37	3 13	3 44	4 16	4 46	5 19	5 50	6 22	7 53
Կ. Պոլիս																					